

ԱՐՈՎԵՅԱՆԻ  
ԿՅԱՆԻՐԸ









Է. ԱՐՈՎԹԱՆ



891 99,092 (Աբովյան)

2-39

№ 1 ԱՐՈՎՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՌՈՒՐՆԵ ԶԱՐԾԱՆ

ՍՑՈՒԳՎԱՍԵ Է 1961 թ.

ԱՐՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՆՐԱՐԴ, ՎԵՐԱՆՈՂԻՄ ԴՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՐԱՏ  
ԵՐԵՎԱՆ  
1940

3685  
A I  
6414



Պատմագիր  
Հր. Գրիգորյան  
Տեխնագիր՝  
Ս. Ալրուցյան  
Սրագրիչ՝  
Ս. Թումանյան

---

ՎՖ 2484 Հրատ. 5344

Պատվեր 681 Տիրած 4000

Հանձնված և արտադրության 5/X 1940 թ.

Ստորագրված և տպագրութ. 28/X 1940 թ.

---

Հայկահայրատի տպարան, Երևան, Լենինի 65


Р. ЗАРЬЯН  
ЖИЗНЬ АБОВЯНА  
Армгиз, Ереван  
1940

## ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայ նոր գրական ուրյան հիմնադիր՝ Խ. Աբովյանի երկերը ժողովրդի սեփականությունը դարձնելու նպատակով, Հայպետհրատը ձեռնարկել է 1940 և 1941 թ. թ. «Աբովյանի գրադարան» սերիայի հրատարակությանը, որն ընդգրկելու է հետևյալ տասը զիւրքը. «Աբովյանի կյանքը», «Բայաքիներ», «Բանաստեղծություններ», «Թուրքի աղչիկը», «Առակներ», «Ընթերցարան», «Հազարփեշեն», հատվածներ «Վերք»-ից, «Քրդեր» և «Անձնական հուշարձան»:

Ներկա գրքույկը, որով սկսվում է «Աբովյանի գրադարան» սերիան, նպատակ ունի ընթերցող լայն շրջանին ծանոթացնել հայ մեծ լուսավորչի կյանքի եվ գործունեության հետ:





Գրողների ճակատագիրը տարբեր է եղել. եղել են գրողներ, որոնց մասին ժամանակակիցները խոսել են ողբով, հալածով, հալածով, բայց հենց որ անցել է մի սերունդ, հետզհետե մոռացվել են: Բայց եղել են և այնպիսի գրողներ, որոնց չի հաջողվել կենդանության օրով տեսնել, վայելել իրենց վաստակի պտուղը, փառքը: Մեծ մասամբ նրանց դեմ կռվել են, հետապնդել, հալածել, նույնիսկ թափաքել: Բայց հենց որ մեռել են, փառքն ինքն է հետևել նրանց: Այդպիսի գրողներին մատուցելի վրա կարելի է հաշվել: Գրանք եղակի են, չափ քիչ: Այդ գրողներն են ստեղծել



գրականության պատմությունը: Նրանց ա-  
նունով է բացվում գրականության պատ-  
մության նոր գլուխը: Այդ զրոգները միշտ  
սկիզբն են եղել ուրիշի շարունակության,  
այսինքն նրանք են ուղղություն ստեղծել,  
ոճ կերտել, ունեցել աչակերտներ, հետե-  
վողներ: Ժամանակի լուսավոր զաղափար-  
ներն արտահայտելը՝ նրանց սրբազան գործն  
է եղել: Հռամանիզմը՝ նրանց եությու-  
նը: Անմահություն—ահա այն պարզիւր,  
որ տվել է նրանց ժամանակը:

Այդպիսիներից է և Սաչատուր Աբովյա-  
նը, հայ նոր գրականության անմահ նա-  
խադրուիւր: Նա մի օվկիան է, որի մեջ  
թափվել է հազար ու մի գետ: Պատմակա-  
նորեն նրան վիճակվեց հարթելու այն  
դժվարին առաջարկը, որով երեսնական,  
քառասնական թ.թ. հայ հառարակական  
մտքի լավագույնն ու լուսավորն ունին՝  
նա քայլեց դեպի մեր գրական—մտավորա-  
կան կյանքի հախտուն վերածնությունը:  
Աբովյանը լուսավորական շարժման առա-  
ջին ջահակիրներէից է: Ինչպես ամենուրեք,



այնպէս էլ մեզ մօտ, լուսավորիչը մի  
կենդանի հանրագիտարան է եղել. մանկա-  
վարժ, աղջաղբաղետ, լեզվաբան, պատմա-  
բան, թարգմանիչ, ֆուկլորիստ, տուրիստ  
և վերջապէս, դրող՝ բոլոր խորագրույն  
խմատով: Այդ առումով Արուսյանը հիշեց-  
նում է իտալական վերածնության դուր-  
ծիչներին:

Պոռչյանն իրավացի էր. Արուսյանը ժա-  
մանակից շուտ էր ծնվել: Նվ իրավ. հե-  
ռավոր տարիների մշուշից նա մեզ ներկա-  
յանում է որպէս մի առասպելական անձ-  
նավորութիւն, որ իր քնքուշ սրտի ամեն  
մի զարկը զոհ բերեց ժողովրդին, միայ-  
նակ հանդուգն պատերազմի ելալ խաւարի  
և տգիտութեան, եկեղեցու ու կղերի դեմ:

Այո՛, Արուսյանը միայնակ էր:

Այդ նրա ողբերգութիւնն էր: Նա մի  
լուստ ճառագայթ էր «խաւարի թաղամա-  
րութեան» մեջ: Նա իր լուսով մի պահ  
բոցավառեց մոռյլ, անվարատ խաւարը,  
և սեփական բոցից էլ ողջակեզ եղալ:

Դառնանք զեպի պատմութիւնը, զեպի

այն ժամանակները, երբ ապրել ու գործել  
է Արուլյանը: Թերթենք նրա կյանքի տա-  
րեգրությունն էջ առ էջ:

---



Երբ է ծնվել խաչատուր Աբովյանը, ըստ  
տույզ հայտնի չէ: Ինքը, Աբովյանն էլ չի  
իմացել իր ծննդյան ճիշտ թիվը: Հիշողու-  
թյամբ նա թողել է մի քանի տարրեր  
թվականներ: Հավանական թիվը պետք է  
համարել 1809-ը: Ծնվել է Քանաքեռում,  
հարուստ, նշանավոր և ամեն կողմից հարգ-  
ված հարկի տակ: Աբովյանի հեռավոր  
նախնիները եղել են իշխաններ: Նեղվելով  
լեռնցիների ասպատակություններից, Ա-  
բովյանի ապուպապը՝ Ապովը թողնում է  
Լաղիստանը, գալիս է Հայաստան:

Ահա այս Ապովից էլ սերում է Աբով-  
յանների տոհմը:

Ապովի մահից շատ տարիներ հետո էլ



նրա սենյակը պատկասանքով էին հիշում  
 ժամանակակիցները. «Հարիւր տարի կլլի,  
 որ լուսահոգի Ապովը մեռել ա, էլի նա  
 ողորմին հա կա, հա կա»: Աբովյանն ա-  
 սում է, որ իր մահկության օրերին թուրք  
 ու հայ նրա դերեղմանովն էին օրթում ու-  
 րում: Ապովի նահապետական աստքինու-  
 թյունները՝ հյուսիսարեւելյան ու ասու-  
 տաճեռնությունը հայտնի էին: Ապովն իր  
 ձեռովը Երեւանից Թիֆլիս տանող ճանա-  
 պարհի վրա մի մեծ աղբի էր դրել, որ  
 «անց կենողը դա, նրա բարությունը վա-  
 յելի»: Այդու բոլոր պատուները օտարե-  
 րինն ու ճանապարհորդներինն էր: Միշտ  
 նրա դուռը բաց էր, որ ով որչափ ուզում  
 է՝ ուտի, տանի: Հաղարավոր մարդ էր  
 մտնում ու դուրս դալիս: Բացի այն՝ որ  
 տանում էին, այլև զթոցների մեջ լցնում  
 էին ու դնում ճանապարհի վրա, որպեսզի  
 մի որևէ օտարական, որ դուցե բոլորովին  
 տեղեկություն չունի այդուց և դալիս անց-  
 նում է, ուտի ու վերցնի այնտեղից, որքան  
 կարող է: Ինչպես որ աղբին, այնպես էլ

տունն էր: Շատ քիչ կալատահեր, որ այդ  
ճանապարհով մեկն անցներ ու չմտներ նրա  
տունը: Արտվի համբավը շատ հեռուներն  
էր տարածվել: Իսկ «ճամփի վրի մեծ ի-  
քու անունը—Հնդստան ա հասել»—ասում է  
Արովյանը:

Արովյանի ժամանակ նրանց տոհմն այլ-  
ևս նախնիների դիրքն ու կարողությունը  
չունէր: Բայց Հարությունը, որ դերդաս-  
տանի նահապետն էր, պակաս անվանի  
մարդ չէր: Նրա տունը Քանաքեռի պատ-  
վաժոր հարկերից մեկն էր:

Նրան շատ լավ ճանաչում էին կաթողի-  
կոսը, էջմիածնի միաբանները, Երևանի  
սարդարը, պարսիկ մելիքները, հայ վաճա-  
ռականները: Նա սիրելի հյուր էր ինչպես  
էջմիածնում, այնպես էլ Երևանում, քա-  
ղաքի անվանի մարդկանց ու մեծամեծների  
տանը:

Նրա հետ մի առանձին սիրով է կապված  
Եղեկ Սաչատուրը: Չհիչեւով գրեթե ոչ  
մի տեղ հորը և մորը, Արովյանն իր  
հորեղբորը, Հարությունին նվիրել է բա-



նաստեղծություններ, նրան դուրս է բերել  
իր դրվածքների մեջ: Դա մի հաղթանդամ  
դյուղացի էր, անվախ սրտի տեր, դար-  
մանալի քաջ, խստաբարո, բայց բա-  
րի, ընտանիքը սիրող: Աշխատանքից հե-  
տո, երեկոները, ձմրան դիճերներին՝  
տանը, օջախի շուրջը, ամառային օրերին՝  
դուրսը, ատղաղարդ երկնքի տակ, իր  
շուրջը հավաքած ողջ գերդաստանը, Հա-  
րությունը խոսում էր, զրուցում աշ-  
խարհի բարու և չարի մասին: Պարզամիտ  
նահապետական դյուղացին աշխատում էր  
իր երեխաներին մարդասիրական դադա-  
րաբաններ ներշնչել: Նա համոզում էր հար-  
դել մեծերին, պահել ընտանիքի պատիվը,  
կանգնել պաշտպան թույլին, օգնության  
հասնել ընկածին: Հորեղբոր զրույցներն  
ու. խրատներն Աբովյանի վրա մեծ տպա-  
վորություն էին թողնում:

Պակաս աղգեցություն չեն ունեցել Ա-  
բովյանի վրա նահապետական դյուղի լի ու  
առատ կյանքը, հայկական հյուրասիրու-  
թյունը, ժողովրդական տոները—բարեկեն-



դանն իր խնդություններով, դյուղական  
 ջահելների խաղը, սլարը, երգը, ջիրիդը:  
 Արուսյանի մանկական հուշերի ոսկեչղ-  
 թայի մեջ առանձին տեղ ունի Քանաքեռի  
 բնությունը: Մանուկ հասակից բնության  
 սիրահար էր նա: Իր նամակների ու բա-  
 նաստեղծությունների մեջ անդադար հի-  
 չում է Քանաքեռը — տեղը բարձր, ջուրը  
 քաղցր, ողը դեղեցիկ, չորս կողմը բաղերով  
 լի: Շատ հաճախ չարաճճի ու աշխույժ մա-  
 նուկը, թողած խաղը, ընկերներին, բարձ-  
 րանում էր կառուրը, նստում ժամերով,  
 սքանչանում բնությամբ: Նա հմայված դի-  
 տում էր անձրևից հետո երկնքի անհուն  
 կապույտի վրա երիզվող չքնաղ ծիածանը,  
 Արարատյան գեղատեսիլ դաշտավայրը,  
 նրա վրա վեհությամբ բաղմած փոքր ու  
 մեծ Արարատները: Զդայուն և չուտ տպա-  
 վորվող մանկան հոգու վրա բնությունը  
 դրեց իր անջնջելի կնիքը: Բնության սերն  
 ու պաշտամունքը չնչում են նրա յու-  
 րաքանչյուր տողի մեջ:

Անկարելի է որ այդպիսի ուշիմ, խելոք



և զգայուն մանկան հոգու վրա հասարակական շրջապատն իր ազդեցությունը չունենար: Մի դերմանացի ճանապարհորդ իր ուղեգրությունների մեջ Արտալյանի բերանից սլաղամուկ է աչն վայրագ բռնությունները, որ խանական Պարսկաստանի տիրապետության օրով դոյություն ունեին Քանաքեռում և ընդհանրապես Հայաստանում: Ամեն ամառ հարկահավաքը դալիս էր դյուղ և մնում երեքից-չորս ամիս: Այդ ամիսներին նա էր դյուղի իշխանավորը: Նրա ցանկությունը կարդադրություն է՝, խոսքը՝ անվերսպահ հրաման: Բոլորը հլու-հնազանդ ենթարկվում էին նրան: Նրա ծառան շրջում էր սնից-տուն և եթե դյուղացիները դաժողաղում էին նրա սահանջը կատարելու, խուժում էր խրճիթ, ճիպտաահար անում բոլորին, տան ունեցվածքը ջարդում, երբեմն էլ այրում: Մ. Թադիսդյանն էլ է տվել այդ բռնությունների նկարագիրը: Նրբ դյուղերում բերք էէր վինում, —ասում է նա, — Երևանի բլդեղի՝ Հյուսեյին խանը, վնասը վերա-



դրում էր ժողովրդին: Նա դուրժ էր դնում  
նրանց վրա բռնություն և անպատմելի  
խռովություն. խլում, հավիչ տալիում էր  
ինչ որ աներում գտնում էր—կահ—կարատի,  
և երբ այդ էլ չէր լինում, խլում էր  
նրանց տունն ու տեղը, որդիներին: «Աղ-  
ջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝  
տանում, շատ անգամ թուրքացնում, հա-  
վատից հանում, շատ անգամ էլ գլուխը  
կտրում, էրում, նահատակում», — պատ-  
մում է Աբովյանը:

Ահա այս բոլորի վիճան է եղել Աբով-  
յանը: Կարո՞ղ էր այս բոլորը չխռովել  
նրա մանկական հոգին: Իհարկե, ո՛չ: Այդ  
բոլոր կեղեքումները ծանր, ճնշող ապա-  
վորություն ևն թողել նրա վրա: Այդ բո-  
լորն Աբովյանը պատկերադրել է «Վերք  
Հայաստանի» վեպի մեջ: Պարզ է, որ  
տառնամյա մանուկն այն ժամանակ շատ  
լուրջ մտքերի հանդեպ չէր կարող: Բայց  
այդ չի նշանակում, որ զգայուն երեխան  
կարող էր անտարբեր մնալ դեպի իր շրո-  
ջապատը: Նա մանկուց թշնամությամբ էր

լցված դեպի հարկահամլաքները, մարդիկ՝  
որոնք տեր էին կանգնում ուրիշի վաս-  
տակին: Նրա մշուշապատ մտածումները  
կարող էին դեռ այն ժամանակ վճիռանալ:  
Չէ՞ որ դյուղացիները համլաքվում էին, ա-  
սում, խոսում, դժգոհում անիրավ կարգե-  
րից, մարդավայել կյանք երազում: Աչքա-  
բաց մանուկը, անշուշտ լսել է դյուղացի-  
ների խոսքն ու դրույցը:



Հայրը մի առանձին մտահոգություն ու-  
ներ ուրդու կրթության և ապագայի վրա:  
Հենց որ Աբովյանը բոլորեց իր տասը տա-  
րին, հայրը նրան տարավ Էջմիածին:

Աբովյանն Էջմիածնում մեաց մոտ հինգ  
տարի: Թե ինչ կյանք է ունեցել նա այդ  
տարիներին՝ չառ քիչ է հայտնի:

Աբովյանը դյուղում, բնության ծոցում  
ծնված ու մեծացած մանուկ էր, որ ընկավ  
Էջմիածին: Նա իբր հետ տարավ դեղջկական  
հոգու պարգություն և մաքրություն: Խա-  
ղը, խնդությունը, անհոգ զվարճանքը,  
մեծերի դուրդուրանքը նրա սովորական



առօրյան էր դյուղում: Նոր շրջապատը,  
 էջմիածնի մթին խցերի վանական կյանքը,  
 դյուղականի հակապատկերն էր: Գուրդու-  
 րանքի փոխարեն՝ դաժանություն, խաղի  
 տեղ՝ ծեծ ու սպառիժ, աղատության փո-  
 խարեն՝ ստրկական հնազանդություն:  
 Ինչպես մյուս մոնիթերը, այնպես էլ Աբով-  
 յանը, կանուխ առավոտից, հավախոտից  
 անմիջապես հետո, սկսեց է արթուն լի-  
 ներ: Ով դժվարաբար ժամանակին վեր կե-  
 նալ, բարակ ճիպոտի հարվածները կիջ-  
 նեին նրա ոտներին: Առավոտյան ժամեր-  
 դությունը տևում էր անտանելի երկար,  
 երեք-չորս ժամ: Մատաղահաս երեխաները  
 ծունկի եկած մրմնջում էին աստվածալիս  
 աղոթքներ: Իսկ հետո էլ մթին ու անհրա-  
 պույր խցերից մեկում, խմբված որևե ծե-  
 րունի վարդապետի շուրջ, մանուկները սո-  
 վորում էին սաղմոս և չարական:

Աբովյանը չդիմացավ վանքի դաժանու-  
 թյուններին: Մի քանի անգամ փախուստի  
 փորձեր արեց: Բայց անհաջող: Փախչող-  
 ների հետ չատ խիստ էին վարվում: Փախ-

չողներին պատժում էին ամենադաժան  
ձևով, այսինքն՝ կախում էին մի բարձր  
տեղից և անողորմ հարվածներ թափում  
նրա ոտքերի և դունդներին, մինչև աննկա-  
րագլուխ ցավերն ուշաթափ կանելն «մեղա-  
վոր» երեխային :

Գերմանացի բանաստեղծ Բոդենշտեյնը,  
որ մոտիկից ծանօթ էր Աբովյանին, իր ու-  
ղեգրությունների մեջ հիշում է, որ Աբով-  
յանն իջմիածնի մասին առել է իրեն թե՛  
կարծեք իր գլխին սառը ջուր են մաղում,  
երբ ինքը ոտք է դնում հին պարխապներից  
ներս, այնքան անտանելի են այն տալա-  
վորությունները, որ ինքն ստացել է իր  
պատանեկության հասակում և որոնք եր-  
բեք այլևս չեն չքանում իր հիշողություն-  
նից :

Ուրեմն, որքա՛ն ծանր է եղել պատանու  
համար այդ հինգ տարվա կյանքը : Գրեթե  
երկու տասնամյակ հետո՝ էլ, վաճառք ոտք  
գնելիս, մռայլ հիշողությունները ծանր  
մղձավանջի նման լիջնում էին նրա վրա :

Բոդենշտեյնի ասելով Աբովյանը մեծա-



ցել է լացի, աղոթքի և պահքի մեջ, վայ-  
րենի, ամեն ազնիւ բանի համար բթա-  
ցած, անբնական հեշտութեանց մեջ ապա-  
կանւած մի շրջապատում, ամէլի օգուտ  
չունենալով, քան այն, որ նա մի փոքր  
դրաքար սովորեց էջմիածնում:

Վանքում Արուսեանի միակ մխիթարու-  
թյունն Անտոն եպիսկոպոսն էր: Արուսեա-  
նի խնամքը նրան էր հանձնւած: Արուս-  
եանն այնքան էր սիրում իր խնամակալին,  
որ երբեմն էլ նրա աղգանունով էր ստո-  
րադրում— իյաչսոտուր Անտոնյան: Արուս-  
եանի ձեռագրերի մեջ պահպանւել է Ան-  
տոն եպիսկոպոսին նվիրւած մի չափածո  
գովեստ\*) : Պատանի բանաստեղծն իր թո-  
թով լեզվով շնորհակալ է լինում ուսուց-  
չին, որ աշակերտին ներշնչել է սեր դե-  
պի դիրքը: Նրա ձեռքի տակ սովորելով  
դրել-կարդալ՝ Արուսեանը տասնհինգամյա  
հասակում ընթերցում է հայրենասիրական

---

\*) Անտոնի մահից հետո, ի նշան երախտագի-  
տութեան, Արուսեանը դերեղմանաքար է դրել տա-  
լիս նրա շիրիմին:

դրքեր: Նա ծանոթանում է Ղուկաս վա-  
 նանդեցու, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթար  
 Աբբայի կյանքին: Կարդացած դրքերը վա-  
 ուում են սլաոմանու մեջ հայրենիքի սերը և  
 կոչում նրան ծառայելու ճնշված ժողովրդ-  
 ղին, երկրին: «Փափաղէի և ես իմ ուսանն  
 կարողութեամբ սլաոմանի լինել աղղին  
 իմում սիրելու», — գրում է Աբովյանն այդ  
 դրքերը կարդալուց հետո: Այդ դրքերն  
 օգնեցին նրան ճանաչելու իր երկրի անցյա-  
 լը, խորամուխ լինելու հայոց սլաոմության  
 մեջ: Նա իմացաւ, որ հայ ժողովուրդն իր  
 սկիզբն առնելով հինալուրց ժամանակնե-  
 րից, ոտք է դրել աշխարհի հզոր սեռու-  
 թյունների հետ: Կարող էր նա չնկատել,  
 որ նույն այդ ժողովուրդն այժմ տառապա-  
 ղին հեծծում է օտար լծի տակ: Իհարկե,  
 ոչ: Գյուղում տեսածն ու լսածը՝ կարդացած  
 դրքերի աղղեցության տակ՝ այժմ կարող  
 էին չատ որոշ խորհրդածությունների ա-  
 ոարկա դառնալ: Անկարելի է, որ սլաոմանի  
 հայրենասերն արդեն չմտմտար այն ու-  
 ղիների մասին, որ հայ ժողովրդին կարող



էին աղատութիւնն բերել: Որոնք էին այդ  
ուղիները, Արուսեանը չգիտեր: Ո՛չ վանա-  
կան միջավայրը, ո՛չ էլ կարգացած գըր-  
քերն ունակ չէին ցույց տալու նրա որո-  
նածը: Եւ հայրենասիրութեամբ տողորված  
տասնչինգամյա պատանու վառվռուն միտ-  
քըն ու հոգին հայրենի երկիրն աղատ ու  
երջանիկ տեսնելու անհուն փափաղով՝ դեռ  
այն ժամանակ իրենց առաջին ճախրանքը  
կատարեցին դեպի երազանքների երանելի  
աշխարհը:



Հինդ տարի էջմիածնում մնալուց հետո,  
Արուսեանն անցնում է Հաղպատ, այնտեղից  
էլ՝ Թիֆլիս: Նա գնում էր ուսման մեջ  
կատարելագործվելու: Թիֆլիսն իր ուրույն  
կյանքով մի նոր աշխարհ էր Արուսեանի  
համար: Գավառացի պատանին ընկել էր  
քիչ թե չատ մեծ, շարժուն քաղաք: Կյան-  
քը Թիֆլիսում մի առանձին ու յուրատե-  
սակ ժպիտ ուներ: Այդ չէր կարող վրիպել  
Արուսեանի աչքից: Չէ վոր քիչ առաջ  
էր միայն նա աղատվել վանքի մոայլ խցե-

րից: Սրտարաց, զվարթ քաղաքը, վանքի  
 մռայլ, միալար կյանքի հակադրատկերն  
 էր: Հենց որ իրիկնասպահը վրա էր հաս-  
 նում, փողոցները լցվում էին երգի և խըն-  
 դուխյան ձայներով: Զուռնա, նաղարա,  
 դհուլ, մի խոսքով՝ պարից, երգից, ծափ  
 ու ծիծաղից թնդում էր քաղաքը: Մի ա-  
 ռանձին սքանչելիք էր, երբ լուսնակ գի-  
 շերով քաղաքի փողոցներում սկսում էր  
 ծորել Սայաթ Նովայի երգերի թախիծը:  
 Նրգիչներն ու նվագողներն անցնում էին  
 փողոցից-փողոց, թաղից-թաղ: Ժողովուր-  
 դը՝ հավաքված դարպասների մոտ, պա-  
 տըղամբների ու կտուրների վրա՝ սւրա-  
 խանում էր: Ծիշտ է նկատել բանաստեղ-  
 ծը, թե Թիֆլիս առաջին անգամ ոտք դը-  
 նողն այն տպավորությունն էր ստանում,  
 որ ինքն ընկել է մի մեծ և ուրախ հար-  
 սանքատուն, ուր հրավիրված էին Կով-  
 կասի բոլոր աղվերն ու ցեղերը՝ քեֆ անե-  
 լու:

Թիֆլիսը քիչ թե չատ լուրջ ուսումնա-  
 կան հաստատություններ չունեիր այն ժա-



մանակ: Մի պատմարանի տակելի՝ ամբողջ  
 քաղաքում որպէս հայադեա հռչակված էր  
 ժամկոչ Եղիազար Գալստյանը: Նա մի  
 իշուքանում, դեռնի միջոց պարապում էր  
 երեսաների հետ, նրանց պահելով ֆալսի-  
 կայի մշտական ահ ու սարսափի տակ:  
 Ահա այդ ժամանակներում Շուշուց Թիֆ-  
 ւիս է գալիս Պոզոս վարդապետ Դարարադ-  
 ցին: Նա նշանավոր հայկարանի համբավ  
 էր վայելում: Վերջինիս եռանդուն գործու-  
 նեության շրջանում ժամկոչ Եղիազարն  
 ստվերի մեջ է մնում: Աբովյանը, Ստ.  
 Նազարյանը և մի խումբ այլ պատանիներ  
 Պոզոս վարդապետի ձեռքի տակ մի տա-  
 րու չափ ուսում են ստանում: Նա իր ա-  
 չակերտների հետ պարապում էր Տափիթա-  
 դի վանքում— իր խցում: Այստեղ ևս ֆա-  
 ւսիկայի թաղախորությունն էր:

Հետաքրքրասեր ու վառվռուն պատանի-  
 ները «վարժապետական դավադանի» ահի  
 տակ, օր ու դիչեր դլուխ էին ջարդում  
 Չամչյանի քերականության, Ադոնց Ստե-  
 փանոսի ճարտասանության և Թեաալրոսի

վրա: «Պիտո է ասել, որ այդ վարժապետը,—դրո՞ւմ է Նաղարյանը Պողոս վարդապետի մասին,— ամէլի ծեծ, քան թէ ուսում է տւել յուր աշակերտներին»:

1824-ին, Ներսէս արքեպիսկոպոսի ջանքերով, Թիֆլիսում բացվեց մի հոգևոր դպրոց: Դպրոցը կոչվեց հիմնադրի՝ Ներսէսի անունով: Նոր բացված դպրոցի տեսուչ կարգվեց Մոսկվայից հրամարկված բանաստեղծ Հարություն Ալամդարյանը: Ներսիսյան դպրոցի բացումը մի կատարյալ հեղաշրջում էր հայ երեխաների կրթութեան դործում: Ասում են, որ դատաւովությունը եղել է վայելելի, բացի Ալամդարյանից մի ուրիշ կարգին ուսուցչիչ չի եղել: Այդ բոլորով հանդերձ, դա հայ իրականութեան մեջ առաջին, բառի ճշգրիտ մտքով՝ աշխարհիկ դպրոցն էր: Բացի ուսանեան, ֆրանսերեն և պարսկերեն լեզուներից, հայ պատանին Ներսիսյան դպրոցում ծանոթանում էր ընդհանուր և հայոց պատմութեանը, քրիստոնեական վարդապետութեանը, անցնում թվաբանու-



թյուն, աշխարհագրություն, նկարչություն, վարժվում ճարտարապետության և տրամաբանության մեջ: Պողոս վարդապետի վարժատուները Ներսիսյանի, մի տեսակ, նախապատրաստական էր: Երբ բացվեց Ներսիսյանը, Պողոս վարդապետն իր աշակերտներով տեղափոխվեց նոր կրթարանը: Տեղափոխվեց նաև Աբովյանը:

Աբովյանի ծանոթությունն Ալամդարյանի հետ վճռական նշանակություն ունեցավ:

Աբովյանի էջմիածնական մտորումների մշուշը Թիֆլիսում սկսեց ցրվել: Էջմիածնում պատանու մեջ արթնացավ սեր դեպի չիրքն, ու ընթերցանությունը: Կարդացած գրքերը նրա մեջ վառեցին հայրենասիրության բարձր դաշուժը: Այդ բոլորն իրենց դադափարական հունը դտան միայն Թիֆլիսում: Այդ հարցում չատ մեծ էր Ալամդարյանի դերը: Մեծ, կարելի է ասել՝ անջնջելի, ազդեցություն է թողել նա իր աշակերտների մտքի և հոգու վրա: Տարիներ հետո Աբովյանն Ալամդարյանի լս-

պանոթթյան լուրն առնելով, իր հիշատա-  
կարանի մեջ գրեց, թե նրա մահով անթիւ  
հայ պատանիներ ու երիտասարդներ կորց-  
րին իրենց ապագան:

Ալամդարյանը ռուսական օրինատացիայի  
մարդ էր: Ռուսական պետականության  
մեջ էր նա տեսնում Հայաստանի փրկու-  
թյունը: Հայաստանի ապագա բախտը,  
կուլտուրական վերածնությունը նա կա-  
պում էր Երեւանը Ռուսաստանի կողմից  
նվաճելու հետ: Կովկասի մեծ մասն արդեն  
նվաճված էր, իսկ Հայաստանը շարունա-  
կում էր մնալ Պարսկաստանի ձեռին: Այդ  
հարցերի մասին նա, անշուշտ, խօսում,  
ըրուցում էր իր աշակերտների հետ: Շատ  
բան այժմ հայտնի չէ այն կապի մասին,  
որ այդ տարիներին ունեցել են աշակերտը  
և ուսուցիչը—Արովյանն ու Ալամդարյանը:  
Լինելով ամենահասակավորը և լրջախոհն  
աշակերտների մեջ՝ անկարելի է, որ Արով-  
յանը դասերից դուրս, դպրոցական պաշ-  
տոնական ժամերից հետո զրույցներ ունե-  
ցած չլինի Ալամդարյանի հետ: Ուսուցչի



գրույցներն առատ սնունդ տալով Աբովյա-  
 նի ծով երեւակայութեանը՝ պետք է որ դեռ  
 այն ժամանակներից պատանուն սովալելն  
 վրջորեն խորհել իր երկրի բախտի վրա :  
 Չէ՞ որ ինքը մանկուց վկա էր եղել,  
 տեսել էր հայրենիքի տառապանքը : Որդե-  
 գրվելով իր ուսուցչի քաղաքական ծրա-  
 դրերին՝ Աբովյանը գտած էր համարում  
 իր որոնածը : Նա էլ, Ալամդարյանի նման,  
 Հայաստանի ազատագրութեան միակ իս-  
 րիսիւր ուսանական պետականությունն է  
 համարում :



Աբովյանը Ներսիսյան (դպրոցի առաջին  
 շրջանավարտներից եղավ : Ներսիսյան դըպ-  
 րոցն Աբովյանի մեջ վառել էր մի անսահ-  
 ման սեր դեպի դիտությունը, բորբոքել նրա  
 եռանդն ու ձգտումը դեպի լուսավորություն-  
 նը : Այլարտական վկայական ստանալով՝  
 Աբովյանն անցավ Հաղպատ՝ Նիքիմ կաթո-  
 դիկոսից Վենետիկ ուսման դնալու թույլ-  
 տրվություն ստանալու համար : Գնալ Վե-

նետիկ, թաղվելը գրքերի մեջ, տիվ ու գի-  
շեր կքվել ձեռագրերի վրա, — այս էր նրա  
երազը: Բայց այդ միայն երազանք էր:  
Անակնկալ պատերազմը պարտիկներին և  
ուսաներին միջև խանդարեց նրան:

Աբովյանը միայն և դեռ պատերազմական  
աղետին: Հայկական դյուղերը մասնավոր  
էին հրի ու սրի: Ժողովուրդն սկսում է  
դադթել, հաստատվել ուստի հողի վրա: Հայ  
դյուղացին ողորձայն լացով հրաժեշտ է  
տալիս իր հողին, ջրին: Ժողովուրդը սար  
ու ձոր է լցվում, իրար վրա թափվում:  
«Լացի, սքի ձենը երկինքն էր հասել,  
լսողի, տեսողի սիրտը էրում, փոթո-  
թում», — պատմում է Աբովյանը «Վերքի»  
մեջ:

Լինելով պատերազմի մեջ, միշտ գերի  
ընկնելու վտանգի տակ, տեսնելով հայ  
դյուղացու անպատեղի զրկանքները, Ա-  
բովյանը մի անգամ ընդմիջտ համոզվեց  
Ալամդարյանի ներշնչած քաղաքական ձրդ-  
տումների ճշմարտության մեջ: Նա թեև  
պատանի, բայց արդեն ուսանական, օրին-



տացիայի համոզված ներկայացուցիչներէց  
էր :

Պատերազմը տակալին չաւարտված՝  
Արուսյանը մեկնում է Էջմիածին : Երևա-  
նում նա դրում է մի ոտանավոր , որով  
փորձում է տալ իր հայրենիքի աղատա-  
դրության ծրագիրը : Այդ բանաստեղծու-  
թյամբ նա հանդես է դալիս իբրև կադ-  
մակերարված քաղաքացի : Հետաքրքրական  
է մի հանդամանք : Արուսյանը դեռ Թիֆլիս  
չմեկնած , 1824-ին , դարձյալ Երևանում ,  
դրեց իր առաջին ոտանավորներից մեկը ,  
որտեղ հայրենիքի տխրադին վիճակից  
դառնացած՝ ողեկոչում է հայրենի անց-  
յալի անցած-դնացած փառքը : Փրկության  
և հույսի ոչ մի չող չտեսնելով ավերակ  
երկրի համար , նա դառնում է դեպի հայ-  
րենի դետերը և խնդրում ; որ իր ար-  
ցունքն էլ խառնեն իրենց հոսանքին :  
Այս բանաստեղծութունը գրելուց հե-  
տո անցել էր մի քանի տարի : Դեմ-  
քեր ու դեպքեր էին փոխվել Արուսյանի  
կյանքում : Պատանի հեղինակը վերադար-

ձեւ էր հայրենիք շատ սրուշ քաղաքական  
ձգտումներով ու համոզումներով: Նոր  
դրվածքի մեջ բանաստեղծն այն միտքն է  
հայտնում, որ հայ ժողովուրդն իր դա-  
ւիք կյանքի բախտը, հանդիսան ու երջան-  
կությունը կդնեն միայն ուսումական պե-  
տականության հովանու տակ: Այդ ցույց  
է տալիս, որ Արուսյանն այդ ստորիններին  
միանգամայն լրջախոհ հայացք ուներ դե-  
պի հասարակական քաղաքական ելանքը:  
Այդ բանաստեղծությունը եղավ Արուսյա-  
նի քաղաքական հասունության վկայա-  
դիրը:



Արուսյանն էջմիածին հասավ այն պահին,  
երբ ողջ միաբանությունը մի անհանդիսա-  
տազնապի մեջ էր: Քաղաքական դեպքերը  
շատ արագ հաջորդում էին իրար: Վաթոյի-  
կոսը չկար: Բոլորը սպասումների մեջ էին:  
Ներսէս Աշտարակեցին, որ այդ ժամանակ  
Վրաստանի թեմի առաջնորդն էր և Ռու-  
սաստանի հաղթանակի համար հայերի մեջ



հող պատրաստողներից մեկը, միաբանութ-  
յան մեջ համախոհներ ուներ և, ի հար-  
կե, նաև հակառակորդներ: Պատանի Ա-  
բովյանն իր համակրություններով հակ-  
ված էր դեպի ներսեսականները: Վերջին-  
ներն էլ միաձնում հող էին պատրաստում  
Ներսեսի համար, նրա զալստյան հետ  
հույսեր և ակնկալություններ կապում:

1827-ի հոկտեմբերին ոռոսաց զորքերը  
Երևան մտան: Հայաստանն անցավ Ռու-  
սաստանին: Աբովյանի և նրա համախոհ-  
ների բաղձանքը կատարված էր:

1828-ին, երբ արդեն պատերազմը վեր-  
ջացել էր, երկիրը դրեթե խաղաղել, Եփ-  
րեմ կաթողիկոսը վերադարձավ էջմիած-  
նին: Կաթողիկոսի վերադարձից հետո, Ա-  
բովյանը կարգվեց «Թարգման և գրագիր  
նորին վեհափառության»: Այս պաշտոնը  
մեծ կշիռ տվեց Աբովյանին: Բացի այս,  
նա լավ գիտեր գրաբար, ինչպես և ոռոսե-  
րեն: Չունենալով իր երկրորդը միառա-  
նության մեջ, վաճի համար Աբովյանը

դարձավ չատ կարևոր և պրեթե անփոխարինելի անձնավորություն:

Բնորը նրան բախտավոր էին համարում, երանի տալիս: Բայց նա ինքն իրեն դժբախտ էր զգում:

Ի՞նչն էր դրա պատճառը:

Էջմիածին վերադառնալով՝ Արովյանը բերել էր, Նաղարյանի խոսքով ասած, «յուր սրտի մեջ մի վառ ուսումնասիրության կրակ»: Հիրավի, Արովյանին այրում էր ուսում ստանալու, կրթված մարդ դառնալու պաղափարը: Երազները հանգիստ չէին տալիս նրան: Որոգայթների անվերջանալի շարանը, դավերն իրար դեմ, կռուիվները, բամբասանքները, որ վանականներին մեծ մասի հոգեկան անուշոհ էին կադմում, Արովյանին զղվեցրել էին: Դեռ այն ժամանակ նա մի ամբողջ գլխով բարձր էր կանգնած վանական ճահճուտից: Նա ուզում էր հեռանալ, դնալ սովորելու: Ընդառաջող չկար: Անտոն եպիսկոպոսի ջանքերն՝ իր սանին Աստարիանի Աղաբաբյան դպրոցում տեղավորելու՝ արդյունք



չէին տվել: Իսկ Անտոնի մահից հետո այդ մասին մտածող անգամ չկար: Չանում էին դաշթակղեցուցիչ խոստումներով հրաժարեցնել նրան իր բարձր ծրագրերից: Հողեորական բարձր կոչումներ էին խոստանում— վարդապետութիւն, եպիսկոպոսութիւն: Այդ փառքը, սակայն, պատանուն չէր հմայում: Նա մտածում էր իր հողեկան աշխարհի կատարելության մասին:

1828-ին Ներսէս Աշտարակեցուն Բեսարաբիա ուղարկեցին: Սա աքսորի նման մի բան էր: Դա մի փորձ էր հեռացնելու, կղզիացնելու մեկին, որի ազդեցութիւնը միաբանության և նրա գործերի վրա չատավելի էր, քան նույնիսկ կաթողիկոսը: Բացի այդ, որ ամենազլխավորն է, Ներսէսի վարած քաղաքականութիւնը Հայաստանում, Երևանի ժամանակավոր վարչության անգամ եղած ժամանակ, ոուս պետականությանը կասկած էր ներշնչում: Ներսէսը, Պատկեմիչի խոսքով ասած, հայ հողեորականության և մանավանդ էջմիածնի վանքի շահերը գերադասել է պետական շա-



հերից: Ներսեսի աքսորը փշրեց նրա կու-  
սակիցների երազանքներն ու սպասումները:

1829-ին մի խումբ հոգևորականներ միտք  
են հղանում Մխիթարյան միաբանության  
օրինակով ընկերություն հիմնել: Նոր մի-  
աբանությունը պետք է գործեր Սևանի  
կղզու վրա՝ իր շուրջը համախմբելով այն  
ժամանակվա լուսամիտ հոգևորականնե-  
րին: Միաբանության նպատակն էր զբաղ-  
վել հայադիտությամբ, տպարան հիմնել,  
գրքեր հրատարակել, ձեռագրեր հավաքել,  
գպրոց ու դրադարան բանալ, մի խոսքով՝  
լուսավորություն տարածել: Նոր միաբա-  
նության անդամներից էր լինելու նաև  
Աբովյանը: Մի ուրոշ ժամանակ գաղտնի  
է պահվում միաբանություն հիմնելու դա-  
դափարը, բայց հետո, երբ արդեն մշակ-  
ված էր գործունեության ծրագիրը, հար-  
ցը հասնում է կաթողիկոսին և սինոդին ի  
հաստատություն: Միաբանություն հիմնե-  
լու դադափարն ազգային ինքնաճանաչու-  
թյան նախանշաններից էր: Այդ նշանակում  
է, որ լուսավորությունն ու առաջադիմու-



թյուէնն արդէն սկսել էին թեւածել խալա-  
 րաբաժնի աշխարհի վրա : Բայց եւիթեմ կա-  
 թողիկոսը, որ Բողենչատի ասելով, սըր-  
 տանց թշնամի էր ճշմարիտ քաղաքակըր-  
 թության և դիտության, իր սառն անտար-  
 բերությամբ դործը լռության մատնեց :  
 Զարմանալի էլ չէ : Լուսավորության տեղ-  
 խայտառակ կռիւներ, բամբասանքներ .  
 առաջագիմության փոխարեն — քստմնելի  
 դավեր ու որոգայթներ, — ահա վանական  
 միջավայրը, որ խեղդում, ոչնչացնում էր  
 ամեն ազնիւ ձգտում, ամեն բարձր և լու-  
 սավոր միտք :



1829-ի ամռան վերջերին, Դորպատի հա-  
 մալսարանի սլոփեաոր Ֆրիդրիխ Պարբոտն  
 իր մի քանի ընկերներով Հայաստան եկավ՝  
 Արարատի դադաթը բարձրանալու : Պար-  
 բոտին հարկավոր էր թարգման : Միակ և  
 հարմար թեկնածուն Արուստան էր : Բացի  
 տեղական լեզուներից՝ հայերենից, աղըր-

բեջաներենից և պարսկերենից, նա գիտեր  
նաև ռուսերեն: Հանդիպման առաջին պա-  
հից երիտասարդը զբաղում է անվանի  
ճանապարհորդի ուշադրությունը: Դեպի  
գիտությունն ունեցած իր ծառայով, իր  
համեստ ձգտումներով, սակավապետու-  
թյամբ և ջերմեռանդությամբ, ինչպես և  
իր մտքի հստակությամբ, սրտով և կամքի  
կայունությամբ, Արովյանն ամբողջապես  
նվաճում է Պարրոտի սերն ու համակրու-  
թյունը:

Սեպտեմբերի 9-ին Պարրոտի արչալա-  
խումբը դուրս եկավ Էջմիածնից: Հասնե-  
լով Սև-ջուր, ուղևորները մի օր մնում են  
այստեղ, ապա մեկնում Ակոռի գյուղը, որ  
լիռան ստորոտում էր գտնվում: Նրանք  
տեղավորվում են ս. Հակոբի վանքում:

Հետևյալ օրը Պարրոտը, դորպատյան ըն-  
կերներից մեկը, Ակոռի գյուղացիներից  
Սահակը, որ շատ լավ ծանոթ էր տեղին և  
լիռան, և մի զինվոր՝ սկսում են վերելքը:  
Նրանք փորձում են բարձրանալ արևելյան



կողմից : Վերելքը տևում է երեք օր և ունենում է անհաջող վախճան :

Սեպտեմբերի 18-ին արշավախումբն իր երկրորդ վերելքն է սկսում : Այս անգամ ուղևորների խումբն ավելի մեծ էր : Արժյանը թախանձում է Պարրոտին՝ իրեն էլ վերցնել : Պարրոտն սկզբում չի համաձայնում , ասելով , որ առանց սրածայր զավաղանի և երկաթադամ կոշիկների զգվար կլինի : Բայց հետո , անկարող լինելով ընկճել պատանու ողևորությունը , զիջում է : Այս անգամ արշավախումբը վերելքն սկսում է արևմտյան կողմից : Դաժան սառնամանիք է լինում : Ուղևորները մի կերպ հասնում են Քեյ-գյուլ կոչվող վայրը և այդտեղ էլ գիշերում : Հաջորդ օրը , կանուխ առավոտից չարունակվում է վերելքը : Մի փոքր բարձունք էլ կտրելով ուղևորները հանդիպում են ձյան մի աշնալիսի բքի , որ վերելքը չարունակելու դեպքում իրենց կյանքը վերահաս վտանգի տակ էին դնելու : Գիշերով ուղևորները վերադառնում են վանք և , վառ եղանակ-

ների պատճառով, սպասում մի քանի օր:

Սեպտեմբերի 27-ին արշավախումբը վերելքի երրորդ փորձն արավ: Պարբոտի դորպատյան ընկերները հրաժարվեցին մասնակցել:

Դժվար ու ծանր էր երրորդ վերելքը: Երկու գիշեր ուղևորները պատսպարվում են մեծ քարերի արանքում, խարույկ վառում, տաքանում: Մի քանիսը թուլացած ընկնում են ճանապարհի կեսին: Մնացածները շարունակում են վերելքը: Հենց որ երևում է դադաթը, բոլորը մոռացած վերելքի անասելի տանջանքները՝ շտապում են ժամ առաջ ոտք դնել լեռան դադաթը:

Սեպտեմբերի 29-ին, օրվա կեսին, վերելքի մասնակիցները, թվով վեց հոգի, ոտք դրին Արարատի կատարը: Արշավախումբը կես ժամ մնում է դադաթի վրա: Եվ մինչև արևը կթեքվեր, Պարբոտը երկրաբանական չափումներ էր կատարում, իսկ Աբովյանը դիտում իր առաջ բացված զմայլելի տեսարանը:

Պատանի կրոնավորն անվանի գիտնական



նի առաջ բացում է իր սիրտը: Նա հայտնում է տարիներով փայփայած իր իղձը՝ դնալ սովորելու, մագլցելու դիտության բարձունքներով, որ մարդու միտքն ընդլայնվի, աղնվանա հոգին, բաղձալի կատարելության հասնի: Լեռան դալաթին, այդ նվիրական պահին, Պարրոտը երգվում է աղատելու նրան տղմից, տանելու հետը դեպի լույս:

Վերելքի մասնակիցները, երբ արդեն օրը երեկոյանում էր, հրաժեշտ են տալիս դալաթին: Նրանք դիչերում են լեռան կրքքին և մյուս օրն անսխալ հասնում վանք:

Պարրոտը մեկնեց: Նա խոստացավ միջնորդել ուր և ում հարկն է և անսպաժան ձեռք բերել Աբովյանին Դորոպատ՝ ուսման ուղարկելու հարկավոր իրավունքը: Պարրոտից հետո՝ Աբովյանը թաղվեց վարդադույն երազանքների մեջ: Նա գուրգուրում էր իր ասպառ կյանքի դալուստը: Հոկտեմբերի 29-ին նա դիմում է ներկայացնում սինոդին, որպեսզի թույլ տան իրեն

Իորպատո մեկնել՝ բարձրագույն ուսում ստանալու։ Սկիզբ առան բամբասանքն ու զրպարտությունը։ Կաթողիկոսից սկսած մինչև վերջին վանականն սկսում են հորդորել Աբուլյանին հրաժարվելու Պարբոտին տված խոսքից։ Հլու-հնազանդ մնալ էջմիածնին և ինչպես առաջ, այնպես էլ այսուհետ, վանքի կամարների տակ, ծունկի եկած, աղոթքներ միմնջալ—այս էր նրանց պահանջը։

Աբուլյանը համառ և անդրդվելի մնաց։ Բայց նրան միշտ չէր հաջողվում լուռ արհամարհությամբ բարձր կանգնել այդ դառնավայրից, չնչին ու խեղճ մարդկանց հասարակությունից, վրո ճահճի նման ցած էր ձգում վե՛ր, դեպի վե՛ր սալառնող հոգին։

Անպակաս էին ծաղրը, հալածանքը։ Դա ուներ իր խորունկ պատճառները։ Պատճառներից մեկն էլ Արարատի դադաթը բարձրանալն էր։ Այն ժամանակ բերնեբերան էր անցնում մի հին առասպել։ Իբր թե սուրբ Հակոբը փորձում է բար-



ճրանալ լեռան գլուխը՝ իր աչքով տեսնելու Նոյան տապանը։ Մի քիչ բարձրացած՝ սաստիկ հողհում է, ուժասպառ ընկնում, լացակումած աղոթում է։ Արտասուքը դառնում է մի աղբյուր։ Հանդիստ առնելով՝ ծերունին շարունակում է վերելքը դժվարին առապարներով։ Քիչ է մնում, որ հասնի լեռան կատարը, բայց այլևս կորցրած ամեն ուժ և կարողություն, ուժասպառ ծերունին ընկնում է խոր քնի մեջ։ Երազում հայտնվում է մի հրեշտակ և ասում.

— Հակոբ, Հակոբ, տերը լսեց քո աղերսանքը. ահա քեզ մոտ է տապանի մի մասը, վերցրու և դնա։ Եվ իզուր մի տքնիր տեսնելու այն, ինչ աստծո կամքով մարդուց անտես պիտի մնա։

Յեվ մի պատանի, որին, ըստ երևութին, չատ լավ հայտնի էր այդ առասպելը, խիլախել էր բարձրանալ լեռան դադաթը, ոտք դնել նվիրական սրբավայրը։ Աստվածավախ կրոնավորների համար այդ մի անսովոր և հանդուգն քայլ էր։ Այդպիսին,

նրանց կարծիքով, անսպասիժ չպետք է մնար :

Կլմիածնի միաբանության մեջ բոլորը երես դարձրին Աբովյանից : «... Ուր որ միայն գնում եմ, վիշաք և խռովությունը ստվերի նման գալիս են իմ ետևից», — դանդատվում է հոգեկան խռովքի մեջ ընկած Աբովյանը : Նրա միակ մխիթարությունն ու անբաժան ընկերը ապադայի հույսն էր, Դորպատ ընկնելու փափաղը :

Հակառակի պես Պարբոտից ոչ մի լուր չկար : Վանքում փափսոց անցավ . եվրոպացին խաբել է հայ պատանուն : Հուսահատության հասած Աբովյանը մի խնդրագիր ուղարկեց կայսեր : Իր խնդրագրի մեջ Աբովյանն ասում է, որ դեռ չառ հին ժամանակներում աղբօղբոտ նպատակներով մեր նախնիները պատանիներին ուղարկում էին Աթենք՝ դիտություն, լուսավորություն ձեռք բերելու : Այժմ, ասում է Աբովյանը, երբ մեր այժմյան երջանկությանը նախնիք անգամ կնախանձեն, մի՞թե ուսման դնավու իր բաղձանքը մնալու է անկատար :



«... Զորս ամենայն աւուրս հառաչանօր  
անցուցանեմ, առ որ եղի ի մտի այժմ կամ  
հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զան-  
ձըն իմ ի վտանգ կորստեան» — գրում է  
Աբովյանը կայսեր իր «խոնարհամատոյց  
պաղատանքի» մեջ:

Անհամբեր՝ Պարրոտից կամ թագավորից  
թույլտվությունն ստանալու, մի վերջին  
փորձ է անում Աբովյանը: Դիմում է Եփ-  
րեմին: Պատանդուն հաջողվում է թախան-  
ձադին աղերսանքով կոտրել կաթողիկոսի  
համառությունը: Եփրեմը կոնդակ է ար-  
ձակում, որով թույլատրում է Աբովյանին  
սովորելու գնալ: Բայց այս անգամ էլ,  
ինչպես երևում է, արգելք են լինում ծը-  
նողները, որոնք չեն ուզում զարիւրության  
մատնել իրենց որդուն:

Հուսախաբության պահեր չատ ունեցաւ  
ուսումնածարաւ պատանին, մինչև որ  
1830-ի գարնանամուտին ստացվեց Պարրո-  
տի նամակը Աբովյանի անունով: «Սիրելի  
բարեկամ, — գրում է Պարրոտն այդ նա-  
մակում, — ձեր վիճակը որոշված է, կա-

տարւել է՝ ինչ ցանկանում էիք: Անհամ-  
բեր սպասում եմ ձեր ուրախարեր դա-  
լրատյան»:

Աբովյանն իր բախտն այլևս վճռված էր  
համարում: Երազանքը դառնում էր իրա-  
կանություն: Նա այլևս չըջապատված չէր  
լինելու բամբասանքներով, դավերով: Ա-  
բովյանը հեռանալու էր վանքից, որի ծը-  
խամած կամարների տակ կարող էր մի-  
այն նրա ճախրանքի ընդունակ հոգին շա-  
շուտ հանգչել, ծխացող մոխիր դառնալ:



Հրաչեժտի պահին մի խումբ հոգևորա-  
կանների հարձակվում են նրա վրա, խլում  
չորերն ու ճամբի պաշարը, մի խոսքով՝ ա-  
նարգ կերպով վռնդում նրան վանքից իրը  
անհավատի: Միակ հարադատ վայրը, ուր  
կարող էր պատանին թափել իր հոգու  
դառնությունը, հայրենի տունն էր: Սիրե-  
լի ծնողների դիրկն ընկած ապաղա պան-  
դուխտը գտավ իր վերջին մխիթարու-  
թյունը: Աբովյանի մեջ այնքան ուժգին



էր Դոքսպատ դնալու փափաղը, որ այս ան-  
գամ նա ուշադիր չեղաւ նույնիսկ ծնող-  
ների պաղատանքին: Եւ «արտասովորիճ  
աչօք» հրաժեշտ տվեց նա ծնողներին, հայ-  
րենի խրճիթին և ճանապարհ ընկաւ դեպի  
Դոքսպատ: 1830-ի սեպտեմբերի առաջին  
օրերին Աբովյանը հասաւ Դոքսպատ: Աբո-  
վյանը մի նոր և անծանոթ աշխարհ էր  
ընկել: Առաջին օրերը խորթություն էր  
դդում նոր միջավայրում. մի տեսակ ճընչ-  
վում էր. կամ, ինչպես ինքն է ասում,  
«սրտնեղությունք» դդում:

Սեպտեմբերի 29-ին Պարրոտի տանը հաց-  
կերույթ կար: Հրավիրված էին շատ հյու-  
րեր, գլխավորապես պրոֆեսորներ: Մի  
խոսքով՝ այնտեղ էր հավաքվել Դոքսպատի  
գիտական միաբնակ: Հրավիրվածների մեջ էր  
նաև Աբովյանը: Օրը նշանավոր էր. բո-  
լորեւ էր Արարատի գաղաթը բարձրանալու  
առաջին տարին: Այդ երեկո Պարրոտը  
հյուրերին ներկայացրեց իր հայ բարեկա-  
մին, որը նշանավոր վերելքի ամենակրրո-  
սեր մասնակիցն էր: Բոլորը շրջապատեցին



նրան, գովեցին նրա եռանդը, լուսավորութ-  
յան ձգտումը: Հյուրերի խնդրով Արուս-  
յանը կարդաց Արարատի դադաթը բար-  
ձրանալուն նվիրված իր մի բանաստեղծու-  
թյունը դրաբար լեզվով:

Պարրոտի խորհրդով Արուսյանը համալ-  
սարան չընդունվեց: Գերմանացի պրոֆե-  
սորն այն կարծիքին էր, որ Արուսյանը  
մասնագիտական կրթություն չպետք է  
ստանա, եթե, իհարկե, ցանկանում է իր  
ժողովրդին օգտակար լինել: Պարրոտը խոր-  
հուրդ էր տալիս նրան ուսանել այն բո-  
լորը, ինչ որ կարող է հարկավորվել մի  
ուսուցչի, որը պետք է վերագառնա երկիր՝  
դրագիտություն, լուսավորություն տարա-  
ծելու: Նվ ժողովուրդը, — զգուշացնում էր  
Պարրոտը նրան, — երբեք չի մոռանա այդ-  
պիսի մարդու երախտիքը: Ճաշին մեծ մա-  
սամբ Արուսյանը Պարրոտների մոտ էր լի-  
նում, իսկ երեկոները՝ Գրասսի, որ Դոբ-  
պատի երիտասարդ պրոֆեսորներից էր:  
Մի րաժակ թեյի շուրջ նստած՝ հայ և  
գերմանացի երիտասարդները զրուցում է-



ին, պարապում: Գրասանը ոչ միայն աշխարհադրական գիտելիքներ էր հաղորդում իր հայ բարեկամին, այլև գերմանական բանաստեղծության սքանչելի նմուշներէց էր կարդում նրան: Գրասանի սիրալիր մերարեւմուտքը, բնության պարզությունն ու անմիջականությունը համիշտակում են Արտվյանի զգայուն սիրտը: Գրասան իր մտերմին ծանոթացնում է ուրիշ երիտասարդների հետ: Հետզհետե Արտվյանի ծանոթների շրջանն ընդլայնվում է, մեծանում: Ամենուրեք շրջապատված զուրգուրանքով, բարեկամական հոգատարությամբ, մշտական ուշադրությամբ՝ Արտվյանը կամաց-կամաց ընտելանում է նոր միջավայրին, նրա վարք ու բարքին:

Պարրոտի բարեկամներն ու ծանոթները, որ մեծ մասամբ գիտնականներ էին, սիրով պարտավորություն առան օգնել հեռավոր երկրից եկած հայ պատանուն: Պարրոտը նրա հետ պարապում էր գերմաներեն և այլ առարկաներ: Պրոֆեսոր Բյուրբերգը նրա հետ անցնում էր պատմություն, պրո-



Ֆեստը Զրիդլենդերը՝ Թվաբանության, իսկ  
Գրաստը՝ աշխարհագրություն։ Ուրիշներն  
էլ պարապում էին բնագիտություն, փիլի-  
սոփայություն և այլ առարկաներ։ Կարճ  
ժամանակից Արտվյանը դերմաներենին տի-  
րապետում է գրեթե իր կատարելության  
մեջ։ Պրոֆեսորները վկայում են, որ նա  
չափ չուտ սովորեց դերմաներեն գրել  
կարդալ, իսկ խոսում էր այնպես, որ դըժ-  
վար էր նույնիսկ կասկածել, թե նա հայ  
է և ոչ դերմանացի։ Նա սկսում է սովորել  
Ֆրանսերեն, որին մի փոքր ծանոթացել էր  
Ներսիսյան դպրոցում։ Կատարելագործում  
է ուսներենի իմացությունը, ձեռնարկում  
է լատիներեն սովորելուն։

Դորպատյան տարիներն Արտվյանի մտա-  
վոր կյանքի հասունության չրջանը եղան։  
Թիֆլիսում, հետո էլ Էջմիածնում, նա մո-  
տիկից ծանոթացել էր հայ պատմիչներին։  
Միայն այժմ նրա միտքն սկսում է հաճել  
աշխարհի մեծագույն քերթողների դրքերի  
վրա։ Դորպատը բազում առիթներով ու-  
մանտիկական ներշնչումների աղբյուր էր։



Դորպատում էր այդ ժամանակ Ֆրիդրիխ  
 Կլինգերը, որի մի դրամայի («Sturm  
 und Drang») անունով էլ մկրտվել էր  
 վաղ ռոմանտիկական ուղղութիւնը գեր-  
 մանական դրականութեան մեջ: Ծանոթ  
 է եղել Աբովյանը նրա հետ, թե ոչ,  
 հայտնի է, բայց անկարելի է, որ նա տե-  
 սած չլինի համբավավոր ծերունուն՝ որ  
 շրջելով Դորպատի փողոցներում՝ դուր-  
 պատյանների հիշողութեան մեջ ոգեկոչում  
 էր այն աղնիւմն ու բարձրը, որ քարոզել էր  
 Sturm und Drang-յան («Գրոհի և փոթոր-  
 ւի») ռոմանտիզմը: Տիրելով գերմաներե-  
 նին՝ Աբովյանը գիշերներ է լուսացնում  
 Գյոթեի ու Շիլլերի դրքերի վրա: Ասում են,  
 որ Աբովյանը Շիլլերին ջրի պես գիտեր:  
 Եւ գեռ Դորպատում Աբովյանը հայերեն է  
 թարգմանում Գյոթեի ու Շիլլերի բանաս-  
 տեղծութիւնները: Նա բնագրով կարդում,  
 ծանոթանում է Լեսինգին, Հերդերին: Աբո-  
 վյանը կարդում է Ռուսսոյին, ոգևորվում  
 նրա դադափարներով: Իսկ չատ տարիներ  
 հետո, ըստ երևույթին, Երևանում ձեռնար-

կում է «Նոր Էլիզի» Թարգմանությանը :  
 Լատիներենն օղնում է նրան ծանոթանալու  
 անտիկ դրականությանը . կարդում է Հո-  
 մերոսին, Սոփոկլեսին, հռոմեականից՝  
 Վիրգիլիոսին, Հորացիոսին, խոսկականից՝  
 Դանտեին, Պետրարկային : «Իլիականից»  
 հատվածներ է Թարգմանում : Անձամբ ծա-  
 նոթանում է ուսական ուսմանտիղմի մե-  
 ծադույն ներկայացուցչին, Ժուկովսկուն,  
 որն Իտալիայից վերադառնալով Ռուսաս-  
 տան, Դորպատում մի քանի օր կանգ ա-  
 ռավ : Մի պրոֆեսորի տանը, ճաչի ժամա-  
 նակ Արովյանը և Ժուկովսկին ծանոթանում  
 են : Ժուկովսկին, իմանալով, որ Արովյանը  
 հայ է, մոնրլանյան ողջույն հաղորդեց ա-  
 րարատյան երկրի դավալին : Թարգմանում  
 է Կարամզլինին : Փիլիսոփաներից ծանոթա-  
 նում է Լայբնիցի, Հեգելի, մանկավարժնե-  
 րից՝ Նիմայերի, Կամպելի, Կրաուդելի և ու-  
 րիչների գործերին :

Դորպատյան միջավայրն իր կնիքը դրեց  
 Արովյանի քաղաքական հայացքների վրա :  
 Այն երկվությունը, որ նկատելի է Արո-



վյանի մտայնության մեջ, մեծ մասով  
 աղուք է առնում Դորպատից: Դորպատ  
 նոր եկած Արուսյանի հոգեբանության ու  
 մտածական աշխարհի մեջ դժեղ կային,  
 որ, անշուշտ, արդյունք էին էջմիածնական  
 միջոցորտի աղբեցության: Հայրենասիրու-  
 թյունն Արուսյանի մոտ այժմ մի նոր, ե-  
 րանգ ստացավ, իր աղուքն առնելով եվ-  
 րոպական լուսավորական շարժման դադա-  
 փարները: Բայց Արուսյանի հայացքների  
 կադապարման վրա մեծ աղբեցություն ու-  
 ներ նաև Դորպատի անմիջական շրջապա-  
 տը: Արուսյանի աչքի առաջ անցավ Բուր-  
 չենշաֆտ կոչվող դադտնի ուսանողական  
 ընկերության դատը: Ձեր կարող նրա վրա  
 ցնցող աղբեցություն չթողնել այն դաժան  
 կարգն ու կանոնը, ուրի կրնկի տակ տրոր-  
 վեցին երիտասարդ դորպատականների ադ-  
 դային-լուսավորական ազնիվ երազանք-  
 ները: Բացի այդ, անպայման Արուսյանի  
 աղանջին հասավ Բելլիայի անկախության  
 համար մղվող կռիվ թնդյունը: Բելլիա-  
 կանին անմիջապես հաջորդեց ապստամ-

թուլթյուն և հասարակի ներսում: Հաղիվ թե  
 այդ պոռթկումները հուզումնալից զրույց-  
 ների տեղիք չտային այն երիտասարդական  
 շրջաններում, որտեղ Աբովյանը լինում էր:  
 Պատահող քաղաքական իրադարձություն-  
 ները պատեհ առիթ էին երիտասարդ հաջ-  
 րենասերի համար զուգահեռադժեր անց-  
 կացնելու ապստամբ ժողովուրդների և  
 իր ժողովրդի բախտի ու ճակատադրերի  
 միջև: Չէ՞ որ այդ բոլորն արդյունք էր  
 այն ազդային ճնշումների, որոնց ենթակա  
 էր մյուսների հետ և Աբովյանի ժողո-  
 վուրդը: Բայց այն մարդիկ, որ անմի-  
 ջապես շրջապատում էին Դորապատում  
 Աբովյանին, մեծ մասամբ չափավոր  
 հայացքների տեր մտավորականներ էին:  
 Չի կարելի ասել, թե նրանց խորթ էր  
 անդատության դադափարը: «Յազատութենէ  
 յառաջանա ամենայն բարիք»—ասում է  
 սրբոփեսորներից մեկն Աբովյանին: Բայց  
 ժանդարմեական սապոգի կրունկն անխըղ-  
 ճորեն ճզմել էր սոմեն մի հանդուգն միտք:  
 Պարբոտը, որի հորդորներն ու զրույցները



միշտ լսում էր Աբովյանը, զգուշացնում էր հեռու մնալ խռովարար երիտասարդներից, չչփվել նրանց հետ, չստեղծել վրտանդավոր կապեր: Պատահած քաղաքական իրադարձությունները Պարրոտի վրտույցների ազդեցության տակ կորցնում էին իրենց ուժանտիկական հմայքը: Նա կարողացել էր Աբովյանին խոր երախտագիտության զգացում ներշնչել ղեպի ցարը, որ «ընդառաջ էր գնացել նրա բաղձանքին», միջոցներ տվել սովորելու, ուսում ստանալու: Դրա հետ միասին նույն Պարրոտը աշխատում եր վառ պահել Աբովյանի մեջ հայրենասիրության կրակը: Նրա քաղաքական հայացքների չափավորությունը չէր խանդարտում, որ նա միշտ, անընդհատ, զրեթե ամեն որ ներշնչի Աբովյանին՝ կյանքի ողջ եռանդը նվիրարել սեփական ժողովրդի լուսավորության գործին: Նվ ոչ միայն Պարրոտը: Բուրգերը և ուրիշ պրոֆեսորներ լուսավորության մեջ էին տեսնում հայերի փրկությունը. արթնացնել ազգային հոգին, լու-



սավորել, դրանից հետո «մնացածն ինքն  
իրեն կլինի»: Երբ մի ժողովուրդ լուսա-  
վորված է, դժվար է նրան քաղաքական  
ստրկացման ենթարկել, և, վերջապես,  
այդպիսի մի ժողովուրդ կունենա այնքան  
ազդային արժանապատվություն, որ թույլ  
չի տա իրեն ճիպոտահար անելու: Լուսա-  
վորություն տարածել ժողովրդի մեջ, քա-  
ղաքակրթել երկիրը, ապա նոր, մի ընդ-  
հանուր և միասնական հայրենիքի մասին  
մտածել:

Ահա այս քաղաքական մտայնությունը  
ներշնչեց նրան դորպատոյան միջավայրը:

Ասում են, որ «հայրենի երկրի կարոտը  
հանգիստ չէր տալիս նրան»: Պատմում են,  
որ Արուլյանի տան առաջ մի մենավոր ծառ  
է եղել: Պանդուխտ երիտասարդը լուսնկա  
գիշերներին նստում էր այդ ծառի տակ,  
մեջքը բնին դեմ տալիս, աչքերը երկնքին  
պցած՝ զրուցում լուսնի ու աստղերի հետ  
իր հայրենի աշխարհի մասին: Շատ անգամ  
էլ արցունքն աչքերին երգում էր, ու այդ  
կարոտի երգերի վրա իշխում էր մի ան-



հուն թախիծ : Հայրենիքից տխուր լուրեր  
էր առնում : Վախճանվում է հորեղբայրը ,  
տվաղակների ձեռքով սպանվում է ուսու-  
ցիչը — Ալամդարյանը : Արուսյանը վշտից  
անկողին է ընկնում : Բարեկամները շրջա-  
պատում են նրան , որ շատ չտրտմի : Բայց  
դժվար էր ամոքել նրա վերքը : «Լուսա-  
հոգի հոր հիշատակին» մի սրտատուչ բա-  
նաստեղծութիւն է գրում : Իր մի ծանոթի  
ուղարկած հոգւածն Ալամդարյանի մասին  
թարգմանում է գերմաներեն և հրատարա-  
կում տեղական թերթերից մեկում : Ալամ-  
դարյանի պատճառով ընդհարվում է «Се-  
верная пчела»-ի («Հյուսիսային մեղու»)   
խմբադիր , ուսու գրող , երրորդ բաժան-  
մունքի լրտես՝ Բուլղարինի հետ :

Եթե Արուսյանը դուռնի չխոնարհեց Բուլ-  
ղարինի առաջ , ինչպես կաներ երևի մի  
ուրիշը , եթե Արուսյանը վրդովված սպառ-  
նաց նրան՝ «ես ձեզ ցույց կտամ ձեր տը-  
մարդութիւնը» , ապա դրա պատճառը  
այնքան այն չէր , որ մեկը , ասենք , Բուլ-  
ղարինը հարկավոր ուշադրութեամբ չվե-



րաբերվեց դեպի իր անձը, նույնիսկ արհա-  
 մարհեց, որքան այն, որ Բուլղարինը վիրա-  
 վորել էր իր և իր ժողովրդի ազգային  
 արժանապատվությունը: Ազգային արժա-  
 նապատվության զգացումը Արուսյանի մեջ  
 միշտ էլ չափ ուժեղ է եղել: Այդ տեսա-  
 կետից ուշադրավ է մի դեպք: Դորպատում  
 մի սպա հարցնում է Արուսյանին, թե նա  
 պարսիկ ուսանող չե՞:—Ո՛չ, ես հայ եմ,—  
 պատասխանում է Արուսյանը, և, նկատե-  
 լով, որ սպան ծաղրանքով է ընդունում  
 իր ասածը, վրդովված ասում է. «Հայ ա-  
 նունը պարծանք է ինձ համար և ես չեմ  
 փոխի այն աշխարհի բոլոր փառքերի հետ»։

Նրա միտքը չափ հաճախ թեև առած  
 թռչում էր դեպի հայրենի լեռներն ու ձո-  
 րերը: «Ի դիչերի և ի տուընջեան սլանան,  
 վերանան ի միտս այն նաղելի կողման Ա-  
 րարատայ,—յորս երբեմն խաղալի զխաղ  
 ոսկեղեն մանկութեան իմոյ»—հառաչանքով  
 գրում է Արուսյանն իր մի նամակում: Ե՞րբ  
 նորից պետք է,—հարցնում է նա,—իր աչ-  
 քերը տեսնեն հայրենի ծուխը, ե՞րբ պետք



է կրկին ծիծաղադեմ իր անսլ ելնեն Հայաստանի լեռները, ե՞րբ սլետք է դարձյալ ծծի անմոռանալի հայրենիքի ծաղկարեր դաշտերի վրայով նազանքով անցնող հալալային մարմանդ գեւոյուռը: Պանթելիստ Աբովյանի մէջ նստած էր խանդավառ հայրենասերի հողին: Օր ու գիշեր նրան մտատանջում էր հայրենիք վերադառնալու, ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու միտքը: Այդ գաղափարը նրան այնքան էր դբադեցնում, որ մի գիշեր էլ երազ է տեսնում՝ իբր թե ինքն արդեն Հայաստանումն է, եկեղեցում հասարակության անսլ քարոզ է ասում: Հանկարծ ներս է մտնում Պարրոտը: Պատկառանքից Աբովյանը կարկամում է, մինչև որ անվանի գիտունը խրախուսական խոսք է ասում. «Սովորեցրեք հայ մանուկներին, սովորեցրե՛ք, ինչո՞ւ լռեցիք»: Այս մի հատիկ օրինակն էլ բավական է գաղափար կազմելու, թե ինչ խոհեր ու հույզեր էին փոթորկում անպառ անաքյալի միտքը:

Եթե ուզեր, նա կմնար այդ լուսավոր-

լիաժ աշխարհում, ապահով ու հանդիսա-  
 կյանք կատեղծեր իրեն համար: Շատ դժ-  
 վար էր հեռանալ և այլևս չդառնալ Դոր-  
 պատ, ուր այնքան շատ բարեկամներ ու  
 ծանոթներ ուներ, ուր չքնաղ Լոտտեն, որի  
 հետ կապված էր հոգու նվիրական դժա-  
 րումներով, նրան այնքան հրճվանք ու  
 բերկրութուն բերեց: Այո՛, շատ բան  
 նրան կատում էր Դորպատի հետ, սակայն  
 մնալն այլևս անկարելի էր: Արժյանը չէր  
 ուզում Նոյան աղուով լինել: Նա երբեք  
 չմոռացավ, որ ինքը, դեռ քսանամյա պա-  
 տանի, Արարատի գաղաթին ուխտ էր կա-  
 պել դնալ, սովորել, վերադառնալ երկիր,  
 դործել ժողովրդի մեջ: Հայրենիքն սպա-  
 սում էր: Պետք էր շտապել:

1836-ի դարնանն Արժյանը հրաժեշտ  
 տվավ Դորպատին: Նա վերադառնում էր  
 հայրենիք հեղաշրջված: Դորպատյան կյան-  
 քը մի շատ կարևոր, ճակատագրական  
 դարձակետ եղավ նրա կյանքում:

Դա եղավ նրա երկրորդ ծնունդը:

Արժյանը մեկնել էր Դորպատ դրեթև



միջնադարյան հայացքներով, սահմանափակ  
գիտելիքներով, բնավորությամբ կտուա-  
րելապես նահապետական դեղձուկ, ասիա-  
կան հետամնացության դրոշմը մտքի և  
հոգու վրա: Այժմ աշխտեղից նա դառնում  
էր իբրև մի լուսավորված, կրթված մարդ,  
գիտուն, բաղմահայաց, կատարյալ եւրո-  
պացի: Ահա թե ինչ և մկայում նրա մասին  
մի անհայտ Փրանսիացի, որ հանդ! պել է  
Աբովյանին հայրենիք վերադառնալուց հե-  
տո. «Աբովյանի հետ տեսություն ըրի,—  
դրում է այդ Փրանսիացին հայ նշանավոր  
հրապարակախոս Ստ. Ոսկանին,— և ստու-  
գիվ դարմացա իր հմտության վրա: Գեր-  
մանական փիլիսոփայության և գրադիտու-  
թյան աեսլիներն իրեն աշխքան ընտանի են,  
որ նույնիսկ եվրոպական մը օգուտ կրնա  
քաղել իր կարծիքներեն: Շիլլերը ջուրի  
պես գիտե. Լեսինգին, Լեյբնիսին կարծիք-  
ները մաղե անցուցեր է և իր ասիական  
երևակայությունով անոնց նոր դույն մը  
կուտա: Գերմանացիի մը չափ կխոսի գեր-  
մաներեն լեզուն, և տարակույս չկա, որ

այս անձը հայ դրադիտության պատիւ ընե-  
օր մը: Տարօրինակ երևույթ մարդկային  
լուսավորութեան. հայու մը բերան արձա-  
դանք է այնպիսի տեսիլներու, որք մեր մեջ  
դեռ նոր կտարածվին: Շիլլերին, Լեսինկին  
դրությունները Կովկասի լեռներու մեջ  
կհաստատվին և լսելի կըլլան, մինչդեռ  
Եվրոպայի մեջ ժողովուրդը կա, որ այս  
հեղինակներու անունը անդամ լսած չէ:  
Զարմանալի բան պիտի ըլլա, եթե Ասիայի  
լուսավորությունը Կովկասէն սկսի և Բրո-  
մեթեին ժայռը տեսնե իր չարչարանքին  
արդյունք...»:

Նույն էր վկայում Բողենչտետը, երբ  
ասում էր, թե նա վերադարձավ  
հայրենիք իբրև դերմանական և ընդհան-  
րապես եվրոպական առաջավոր կուլտու-  
րայի առաքյալ արևելքում:



Արովյանն շտապում էր հայրենիք: Վար-  
դադույն հույսերի մեջ էր: Ճանապարհին  
դործունեութեան ծրագրեր էր կազմում:



Նա փափաղում էր էջմիածնում հվրոպա-  
կան հիմունքներով դպրոց հիմնել, ժողո-  
վրդական ուսուցիչներ պատրաստել: Բայց  
ավա՛ղ, մի խոր հիասթափություն էր  
սպասում նրան:

Թիֆլիսում նա հանդիպեց Հովհաննես  
Կարբեցուն: Արուլյանը ներկայացավ Կար-  
բեցուն նախարարի հանձնարարական նա-  
մակով: Խնքնահատվան կաթողիկոսին այդ  
դուր չեկավ: Ավելացրեք դրան և այն,  
որ Արուլյանի հակառակորդներն արդեն  
կարողացել էին ներշնչել կաթողիկոսին  
այն միտքը, թե նա լուծերական է, հա-  
վատից, Եկեղեցուց չեղված: Կարբեցին  
նրան ընդունեց թշնամաբար: «Հրամանա՞ւ  
դաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հա-  
ւատոյ, դու լաւ խմորել կարես զմիտս ան-  
մեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ», —  
այս խոսքերով դիմավորեց կաթողիկոսն  
Արուլյանին:

Արուլյանը միայնակ մնաց: Բոլորը երես  
դարձրին նրանից: Նա այլևս կռվան չու-  
ներ: Հուսախար եղած Արուլյանին հարկա-

վոր էր ըստե առաջ հրաժարվել էջմիածնի հետ կապած հույսերից, բայց նա այն ժամանակ այնքան ուժ և կորով չգտավ իր մեջ: Նա չկարողացավ այրել այն կամուրջները, վոր նրան կապում էին եկեղեցու հետ: Ինքն իր մտորումների հետ՝ Աբովյանը դեղերեց Թիֆլիսում քաղցի մատընված: «Զամ մի և կէս մնացի ի Տիֆլիս՝ յետ վերադարձի իմոյ Եւրոպիոյ կարօտ և աւուրն սլարենի», հիշում է Աբովյանը տարիներ հետո:

Բայց այդպես չարունակել անկարելի էր: «Ստիպեալ ի չքաւորութենէ մտի ի պաշտօն արքունական, զոր ոչ երբէք կամէի» — գրում է Աբովյանը: 1837-ի փետրվարի 12-ին Աբովյանը նշանակվում է Թիֆլիսի դավառական ուսումնարանի տեսչի պաշտոնակատար:

Երեսնական թ. թ., այսինքն Աբովյանի ժամանակ, Թիֆլիսն Անդրկովկասի կուլտուրական կյանքի առանցքն էր: Դա մի բաղմադդի ընտանիք էր՝ հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս, դերմանացի, ֆրան-



սխալի—որքան կուղեք: Ռուս հեղափոխա-  
կանների համար Թիֆլիսը դարձել էր ար-  
սորավայր: Դեկարբիստներից մի քանիսը,  
ինչպես և ընդհանրապես քաղաքականապես  
անբարեհույս ճանաչված ռուս մտավորա-  
կաններն ու դործիչներն արքայոված էին  
Թիֆլիս: Այդ տարիներին, ինչպես և մի  
փոքր առաջ, Ռուսաստանում խուլ և լռել-  
յա՜յն, հեռունեքում՝ ավելի բացահայտ,  
առաջավոր միտքը հուղված հետևում էր  
քաղաքական ուսուցիչային, որի կրնկի տակ  
տրորվում, ճղմվում էր ամեն ազնիվ ճշ-  
մարտություն, ամեն բարձր միտք:

Պաշտոնի անցնելով Թիֆլիսում՝ Արմի-  
յանը պետք է ասյրեր, շնչեր այդ մթնո-  
լորտում: Սնկարելի էր, որ նրան լավ  
չճանաչեին քաղաքում, որովհետև Դորպա-  
տից էր եկել, համալսարանականի համբավ  
ունեք, լեզուներ գիտեք, մի խոսքով՝ իր  
Ժամանակի կրթված մարդկանցից մեկն էր,  
այսինքն՝ այնպիսի մեկը, որի նմանները  
չառ քիչ ու հաղվադեպ էին այն Ժամանակ  
Թիֆլիսում:



Ուսումնարանում Աբովյանը ծանոթանում է Միրզա Ծատալի Ախունդովի հետ— ադրբեջանական նշանավոր գրող և փիլիսոփա, որի վրա Աբովյանը, անշուշտ, մեծ ազդեցություն է ունեցել։ Միասին նրանք աշխատում են մինչև 1840-ը։ Ուրիշ պաշտոնի անցնելու պատճառով, դպրոցը հոփարակամ թողած Ախունդովին փոխարինում է մի այլ ոչ պակաս նշանավոր դեմք, ադրբեջանական հայտնի բանաստեղծ, հետադայում համաեվրոպական հռչակ ձևեր բերած Միրզա Շաֆին, վորն ընկերների շրջանում, Բողենշտետի արտահայտությունամբ՝ «Գյանջայի իմաստունի» համբավն ուներ։ Պահպանվել է այն դեկլացադիրը, որով Աբովյանն անձամբ երաշխավորել է Միրզա Շաֆուն՝ բարձրագույն իշխանությունների առաջ, դպրոցում նրան դասեր տալու համար, վկայելով նրա անձնական և իմացական արժանավորությունները։ Ինչպես Ախունդովի, այնպես էլ առավել ևս Միրզա Շաֆուն հետ, Աբովյանը բարեկամական անխախտ կապերի մեջ է եղել։



Լաւլը, ազնիւն ու մարդկայինը աղբբեջան-  
ցի և հայ դործիչներին միացրել էր մի  
ջերմ, անքակտելի բարեկամութեամբ:

Արուսեանը ծանոթութիւն է ունեցել  
վրացի մտավորական Չուբալաշվիլու հետ:  
Մտ. Նաղարյանի վկայութեամբ՝ Չուբա-  
լաշվիլին համամիտ էր հայ և վրացի ժողո-  
վուրդների վերածնութեան մասին ունե-  
ցած իր և Արուսեանի հայացքներին: Չու-  
բալաշվիլին առաջին վրացին էր եվրոպա-  
կան կրթութեամբ: Մի շարք լեզուներ է  
իմացել: Դեռ այն ժամանակ բնագրով կար-  
դացել է «Այվենդոն», չրջել է եվրոպական  
քաղաքները, Դորադառուած ծանոթացել է  
Նաղարյանի հետ:

Արուսեանի Թիֆլիսյան ծանոթներէց էր  
նաև դերմանացի բանաստեղծ Յրիզրիկ  
Բողենչտեարը, որի համար նա հալաքել էր  
քրդական և աղբբեջանական ժողովրդական  
երգեր: Արուսեանը ծանոթ է եղել նաև  
ուկրաինական բանաստեղծ Ռոսկոպչենկոյի  
հետ:

Այս էր նրա միջավայրը Թիֆլիսում:

Ուսումնարանում նրան շրջապատում էին հայ երեխաների հետ նաև վրացի և ադրբեջանցի մանուկներ։ Մանկական աշխարհը, —ինչպես երևում է Ֆրենկին դրած նամակից —վաղուց ի վեր եղել է Աբովյանի համար բոլոր երկրային սրտահաճ բախտավորություններից ամենաբարձրը, նամանավանդ, որ այդ երկու հարյուրի չափի աշակերտներն իրենց սերն ու համակրությունն են պարզեցել նրան։

Աբովյանը հիմնում է նաև մի մասնավոր դպրոց։ Սկզբում վանքի բակի միակ խնջում, իսկ հետո՝ իր տանը համալրում է մի խումբ հայ, ադրբեջանցի և ղերմանացի երեխաներ, թվով 25 հոգի և պարապում հետներն իր ուղածի պես։

Ճանապարհորդ պրոֆ. Մորից Վադները, որ իր զրքում բավական էջեր է նվիրել Աբովյանին, պատմում է նրա աշակերտների ուսումնական առաջադիմությունը։ Այն, ինչ տեսել է Վադները Թիֆլիսում, անցյալ դարի 30-40 թ.թ., մի կատարյալ անակնկալ էր եվրոպացու համար։ Նա պատ-



մում է, որ 10-14 տարեկան տղաները շատ  
լավ կարդում և գրում էին հայերեն, ա-  
ղբրբեջաներեն, ռուսերեն, ֆրանսերեն և,  
մանավանդ, գերմաներեն: Վաղները «լսեց  
գերմաներեն մեր կարդալը, խոսելը. զար-  
մանք հայտնեց մեր առաջադիմության  
վրա,—պատմում է Աբովյանի աշակերտնե-  
րից Աբլոյանը,—վարժապետս աշակերտ-  
ներին գերմաներեն հարցեր էր տալիս, մենք  
նույն լեզվով ազատ պատասխանում էինք:  
Վաղները հիանում էր, երբ ես Շիլլեր էի  
կարդում ու իմ բառերով պատմում, իսկ  
Խատիսյանց Գաբրիելը՝ Գյոթեի ոտանա-  
վորներն էր կարդում ու արձակ պատ-  
մում»:

Մասնավոր դպրոցի վրա պետական-չի-  
նովնիկական աչքը չէր հսկում: Մանավանդ  
որ դպրոցն Աբովյանը հիմնել էր 1837-ին,  
պետությունից թաղուն, իսկ պաշտոնական  
թույլտվություն ստացել էր միայն 1840-ին:  
Աբովյանն անում էր կամեցածը: Ա-  
շակերտների ձեռից վերցնելով Սաղմոսը,  
ավետարանը, Աբովյանը նրանց ձեռն է



տալիս Գյոթեի և Շիլլերի դրքերը: Իր աշակերտների համար նա փորձում է կազմել ուսումնական ձեռնարկներ հայերեն լեզվով: Նախ կազմում է «Նախաշավիղը» (մի այբբենարան իր ընթերցարանով): Այնուհետև կազմում է մի աշխարհագրական ձեռնարկ, որը բացվում է «Ամերիկու լիս քցիլը» ակնարկով: Եվ, վերջապես, «Ռուս տեսական և գործնական քերականություն հայերեն լեզվով ըստ Տապալի»: Վերջին ձեռնարկով Աբովյանը փորձում է հեշտացնել ուսու լեզվի ուսումնասիրությունը հայերի մեջ: Նա դատապարտում է ուսսերեն խոսքերը լատինական տառերով դրելու եղանակը: Նա չի ընդունում նաև ուսու լեզվի առանձին հնչյունները հայերեն տառերով ավանդելու ձևը և հարուցում է ամենլի ճիշտ և նպատակահարմար եղանակի անցնելու պահանջը: Նույն պահանջը, Աբովյանից անկախ, առաջ էր քաշել նաև դերմանացի հայկաբան Պետերմանը:

Աբովյանը, ինչպես պատմում են նրա աշակերտները, անչափ զգայուն, Զղային



մարդ էր։ Ամենաթեթև առիթից հուզվում,  
բորբոքվում էր։ Իբրև մանկավարժ շատ  
խիստ էր։ Չէր կարողանում տանել, երբ  
մեկը դասի ժամանակ անուշադիր էր մնում  
դեպի իր խոսքը։ Համբերությունից դուրս  
եկած՝ երբեմն դիմում էր ծեծի, թեև  
սկզբունքով դեմ էր դրան։ Օրինակ, Գաբ-  
րիել Սունդուկյանը, որ նույնպես եղել է  
Արուսյանի աշակերտներից, պատմում է,  
թե ինչպես մի քանի անգամ իր եղբորը՝  
Միքայելին, դասի ժամանակ Արուսյանը  
նկատողություն է անում, որ ուշքը վրան  
պահի, եղբայրը չի լսում։ Բարկացած՝ Ա-  
րուսյանն ականջից քաշում է։ «Բայց նա  
անչափ նրբազգաց սիրտ ուներ, — պատ-  
մում է Աբիմյանը, — քիչ ժամանակից հե-  
տո սկսում էր ծեծված աշակերտին փայ-  
փայել և իրա արածի վրա արտասվելու  
չափ զգացվել»։

Բոլոր աշակերտներն էլ առում էին, որ  
նա միայն ուսուցիչ չէր, այլ հոգատար  
հայր։



1838-ին Արուստանը խնդրատու է լինում  
 Էջմիածնի սինոդին իրեն հոգևոր կոչումից  
 ազատելու մասին: Պատճառներից մեկն էլ  
 դառնում է մի մատաղահաս դերմանուհի՝  
 Էմիլիա Լոռու անունով: Արուստանն Էմիլի-  
 ային հանդիպել էր Թիֆլիսի դերմանական  
 դպրոցում, ուր հաճախ, վշտացած սլահե-  
 րին, դնում էր վերհիշելու իր դորպատյան  
 կյանքի տարիները: Սիրահարված քսա-  
 նամյա Էմիլիային՝ Արուստանն անհամբեր  
 սպասում էր սինոդի վճռին: 1839-ի սկիզբ-  
 ներին սլատասխան ստացվեց: Արուս-  
 տանն այլևս հոգևորական չէր: Նույն  
 տարվա աշնանամտին Արուստանը և Էմիլի-  
 ան ամուսնացան:



Արուստանին չէին հասկանում: Նա բարձր  
 էր կանգնած Ժամանակից և միջավայրից:  
 Մենակ էր ու անօգնական: Էջմիածնի ու  
 հոգևորականության հետ վաղուց դժուր  
 վաճ էր: Առևտրական դասը երբեք ընդա-



հաջ չգնաց նրա լուսավորական ծրագրե-  
 րին: Բարձր պաշտոնեությունը, ինչպես  
 երևում է, այնքան էլ բարեհուսություն  
 չէր ներշնչում դորպատյան համալսարա-  
 նականը: Իսկ նրա անմիջական շրջապատը  
 մի կատարյալ ճահիճ էր: Պաշտոնակիցներ  
 ի հնավանդ հայացքները, մանկավարժա-  
 կան անկարողությունը, նախանձն ու չա-  
 րակամությունը խանգարում էին նրան  
 փոխելու դպրոցի ներքին կյանքը, եվրո-  
 պական հոգի հաղորդելու նրա ուսումնա-  
 կան առօրյային: Աբովյանն ամենուրեք  
 հանդիպում էր անտարբերության: Նրան  
 շրջապատում էր թշնամությունը: Անպա-  
 կաս էր որողայթն ու դավը: Նա աղատում  
 չուներ այդ մարդուկներին: Նրանք կրճն-  
 կակոխ հետևում էին Աբովյանին, զրպար-  
 տում, դավեր սարքում նրա դեմ: Առաք-  
 յալին ստիպում էին պատիկանալ, նմանվել  
 մյուս չինովնիկներին, դառնալ մի սովո-  
 րական քաղքենի, հրաժարվել այն բարձր  
 իդեալներից, որոնք այնքան հմայք ունեին  
 նրա աչքում:



Ինչպէս չուտ ոգևորվող, այնպէս էլ չափ  
չուտ հուսահատվող, ընկճվող էր Աբով-  
յանը: Ծանր ու անմխիթար օրեր չատ ապ-  
րեց: Ակադեմիկոս Ֆրենին և Ստ. Նաղար-  
յանին դրած նամակներն Աբովյանի հոգե-  
կան փոթորկումների լուռ հուշադրերն են:  
«Ես տարուրերվում եմ տաշեղի վրա մի  
ալեկոծ ծովի մեջ», — ասում է նա Ֆրե-  
նին:

Աբովյանը որոշեց Թիֆլիսից հեռանալ:  
Գանդատվելով իր վիճակից, Աբովյանը մի  
նամակում Ֆրենին հարցնում է. «Կարո՞ղ  
է արդյոք Պետերբուրգում մի անկյուն  
դռնվել, վորտեղ ես կարողանում իմ հացը  
հայթայթել»:

Ֆրենն օգնության հասավ:

Ազգային լուսավորության նախարարու-  
թյան առաջ նա հարց բարձրացրեց Ղա-  
դանի համալսարանում հայոց լեզվի և  
գրականության ամբիոն հիմնելու մասին:  
Նրա առաջարկն ընդունվեց: Ֆրենի առա-  
ջարկով ամբիոնի պրոֆեսորության թեկ-  
նածու առաջ քաշվեց Աբովյանը: Վեց ամ-



այս ժամկետ էր սահմանված զխոտական չա-  
րադրությունն ներկայացնելու՝ ամբիոնի  
պրոֆեսորությունը ձեռք բերելու համար։  
Այդ մասին Արուստիան ուշացումով իմա-  
ցավ։ Նա շտապեց ուղարկել իր երկու  
սլաւոբաստ աշխատությունները։ Մեկը՝  
«Ռուս տեսական և դործնական քերական-  
ությունը հայերեն լեզվով», մյուսը՝ այբ-  
բենարանն իր ընթերցարանով՝ հայ սլաւո-  
նիկներին համար։ Վերջինս հռչակաւոր «Նա-  
խաշավիղն» է։ Արուստիանը բոլորովին ան-  
հույս էր, որ «նման աշխատանքները հա-  
մապատասխան լինեն» ահադեմիայի պա-  
հանջներին։

Գրախոս նշանակվեց ահադեմիկոս Բրոս-  
տեն։ Վերջինս Արուստիանի մեջ տեսնում է  
այն մարդուն, որ առաքելություն է վերց-  
րել լուսավորել իր ազգը։ Նոր լեզվի ժըխ-  
տումը և հնի պահպանումը, — մեջ է բերում  
Արուստիանի միտքը Բրոստեն, — պատճառ  
է դառնում թանձրացած տգիտության, որի  
մեջ խորասուզված է ժողովուրդը և նույն-  
իսկ, ինքը հողևորականությունը։ Բրոս-

սեն խոստովանում է, որ ինքն այնքան էլ համակիր չէ հայ ժողովրդական լեզվին, բայց «երբեք մտքովս չեմ անցրել,—դրում է նա,—որ ես չուտով ստիպված պիտի լինիմ փոխել կարծիքս... և այդ մեր հեղինակի շնորհիվ, որ ներչնչեց ինձ դրա դադարիարը»:

Չնայած դրան, Աբովյանի հայացքների խոր դեմոկրատիզմը նրան երկընտրանքի մեջ էր դրել: Բրոսսեին դուր չեն եկել Աբովյանի կրքոտ հարձակումները եկեղեցական լուսավորության և ընդհանրապես հոգևորականության դեմ, ինչպես և նրա այն հանդուգն հայտարարությունը, թե դրարարը մեռած լեզու է, թե նա անօգուտ է և, մինչև իսկ, վնասակար: «Նրա այդպիսի պնդումները,—ասում է Բրոսսեն,—խալառ. թույլ չեն տալիս կարծելու, որ նա ի վիճակի պետք է լինի պատվով կատարելու իր պարտականությունները»:

Աբովյանը, որն անհամբեր սպասում էր պատասխանի, 1841-ի սկզբներին հետ



ստացաւ իր ձեռագիրը: Դա մերժման նշան էր:



Պաշտօնական մտայնությանը դերի մնացած մտավորականությունից հիասթափւած՝ Աբովյանը փորձում է ավելի մերձենալ ժողովրդին, մտնել նրա խորքը, ճանաչել նրա հոգեբանությունը: Աշակերտները պատմում են, որ նա առանձին սեր ուներ դեպի ժողովրդական տոները: Դա նրա համար անհոգ զվարճանքի աղբյուր չէր: Նա յուզում էր ժողովրդի մեջ լինել, չմիւլել, լսել նրա զրույցը, դիտել վարք ու բարքը, իմանալ ի՞նչն է հուշում, ոգևորում այս հասարակ ու պարզ մարդկանց: Դորպատում ուսած, եվրոպականացած Աբովյանը չէր խորչում ժողովրդից, ինչպես շատ մտավորականներ, այլ, ընդհակառակը, որտեղ ջիրիդ էր լինում, մուշտակով կամ դէյնորա, շտապում էր այնտեղ: Մեծ հետաքրքրություն ուներ դեպի ուխտադնացությունները: Մի անգամ կնոջ

և մի խումբ աշակերտների հետ նա մաս-  
 նակցում է սուրբ Գեվորգի տոնախմբու-  
 թյանը: Զվարճասեր ուխտավորները, դի-  
 շերով, բաց երկնքի տակ, խարույկ էին  
 վառում, ասում, խոսում, ծիծաղում կամ  
 կրակի շուրջը նստած՝ աչուղների նմա-  
 դին ու խաղին էին ահանջ դնում:  
 Մի խոսքով՝ ամեն կողմ զուռնա,  
 երգ, սլար: Միայն Արովյանը, խը-  
 րախճանքը թողած, շրջում էր ուխտավոր-  
 ների մեջ, խոսում նրանց հետ, կամ լուռ  
 լսում նրանց խոսքն ու գրույցը: «Շատ ան-  
 դամ, -- սխառում է Արովյանը «Վերքի» ա-  
 ռաջարանում, -- որ զոնաղ էի դնում, յա  
 քաղաքովն անց կենում, ուչ ու միտքս  
 հավաքում էի՝ թե տեսնեմ խալխը խոսա-  
 լիս, քեֆ անելիս, ի՞նչ բանից ա ավելի  
 հաղ անում: Շատ անգամ տեսնում էի, որ  
 մեյդանում, փողոցում մեկ քոռ աչղի էն-  
 պես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել՝  
 ահանջ դնում, փող բաշխում նրան, որ  
 բերանների շուրջը դնում էր»:

Արովյանն ինքն սկսում է հավաքել ժո-



զովրդական խոսքն ու զըրույցը, առաւելներ  
 մշակել, պերմաներենից, Փրանսերենից ու  
 ռուսերենից թարգմանել, փոխադրել, բայց  
 այնպէս, «որ խալիսի սրտով ըլի»։ Ժողո-  
 վըրդական «ջանգլուլումների» նմանութեամբ  
 նա հյուսում է իր բայաթիւների շարքը։  
 Այս բոլորը նա համարում է մի գրքի մեջ  
 «Պարապ վախտի խաղալիք» ընդհանուր  
 վերնագրի տակ։ Արուսեանի կյանքի այս  
 շրջանը հարուստ է հաղար ու մի հղացում-  
 ներով։ Բացի Փոլկլորային նյութեր համար-  
 քելուց, նա նորոգում է աշխարհիկ նյութի  
 հիման վրա ժողովրդական լեզվով մշակել  
 գրեթե գրական բոլոր ժանրերը. վեպ,  
 պատմվածք, դրամա, առակ, երգիծական  
 պոեմ, բանաստեղծութիւն, քառյակ, ման-  
 կական ոտանավոր, թարգմանութիւն,  
 ակնարկ, հոգված և, վերջապէս, էպիս-  
 տոլյար գրականութիւն։ Այս շրջանում նա  
 գրում է «Թուրքի աղչիկ», «Առաջին սե-  
 րը», «Օվսանա» պատմվածքները, «Հաղար-  
 փեշեն» երգիծական պոեմը։ Գրում է շատ  
 ուրիշ գործեր էլ, բայց ամենանշանակա-



լիցը, որ նա ստեղծեց այդ տարիներին,  
հռչակավոր «Վերք Հայաստանի» վեպն  
էր:

Արուսյանը դիտեր, որ իր արածը դիմա-  
դրության է հանդիպելու: Նա «Պարապ  
վախտի խաղալիք» դրքի առաջաբանում  
գուշակում է իր գրքերի գլխին դալիք փոր-  
ձանքը: «Վախենում էի, թե ժամանակս,  
փողս կորչի, դրքերս էլ մեկտեղ, թողումը  
վեր ընկած մնա, փթի»: Բայց նա հույսը  
չի կորցնում: Բարեկամներն ու ծանոթները  
խորհուրդ են տալիս գրքերը տպել տալ:  
Պահպանողական միտքը ծառս է կանգնելու  
իր գրքերի դեմ, — այսպես էր համոզված  
նա: Գրքերից մեկին նա մի այսպիսի խրատ  
է կցում.

Գնա՛, իմ խեղճ դի՛րք՝ դնա՛ մարդամեջ.  
Գլուխդ քաշ գցի՛ր, մի՛ նեղանար հեչ:  
Ականջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,  
Ինչ ասեն, խոսեն, տա՛ր ու համբերի՛ր:

Ամեն մի խոսքին ականջ դնողը  
Գլուխը կկորցնի, յա ելած գուղը:



Ու թե լայաղ չանի քեզ վերջնի, կարթա,  
Թո՛ղ իր շնորքը պահի, մոտ չը դա:

Արուլյանն անհույս չէր: Այս խրատի մեջ  
նա չատ պարզ ասում է, որ կգա ժամա-  
նակ, երբ մարդիկ կիմանան, կհասկանան  
իր դրքերի արժեքը, կգան ուրիշ մարդիկ,  
և իր օրինակով կդրեն, կմշակեն, «դժա  
լավը կշինեն»: Արուլյանին հավատ էր  
ներշնչում ժողովուրդը: «Թե գիտուն, խե-  
լոք մարդիք ինձ պախարակեն, դու էլ ա-  
յնձ պահի՛ր՝ սի՛րելի աղբ, չունքի իմ ու-  
ղածս էն ա, որ քեզ ծառայեմ, քե՛ղ իմ  
կյանքս տամ, քանի չունչս բերնումս  
ա», — դիմում է նա ժողովրդին:

Գոտեպնդված, ուժ առած ազնիվ բարե-  
կամների խոսքից, քաջալերանքից, ժողո-  
վրդի համար բարին ու գեղեցիկն անելու  
բարձր գիտակցությունից, Արուլյանն ան-  
քուն գիշերներ էր լուսացրել սեղանի մոտ,  
դրքերի ու թղթերի մեջ թաղված: Վոդե-  
վորության այդ նվիրական պահերին նա  
թղթին էր հանձնում իր մտքերը, հույզե-

ըր, այդպիսով հիմք դնելով հայ նոր  
գրականության:



«Վերք Հայաստանի», — ահա այստեղ է  
խակական Արուսյանը: Դա նրա կյանքի կո-  
թողն է, վաստակի վառքը: «Վերքը» եղավ  
այն երջանիկ դիրքը, որով բացվում է հայ  
նոր գրականության տարեգրությունը:

Ի՞նչն ստիպեց Արուսյանին գրելու «Վեր-  
քը»:

Արուսյանն առաջինը դիտեց, որ հայերենը  
մոռացվում է. ժողովուրդը մտքերն արտա-  
հայտում է թուրքերեն, մտավորականու-  
թյունը՝ ռուսերեն: Նա մի ներքին ողբեր-  
գություն ապրեց: Դա միայն մանկավարժի,  
աշակերտին սիրող ուսուցչի հոգական ալե-  
կոծումը չէր, այլ և հանդուդն քաղաքա-  
ցու, որի հոգում դլուխ էր բարձրացրել  
վիրավորված ազգային արժանապատվու-  
թյունը: Շատ մռայլ էր պատկերանում ա-  
պագան Արուսյանին: Լեզվի հարցը — գրա-  
բարժ թե աշխարհաբար, նրա համար մի



սովորական հարց չէր: Այդ հարցի անհա-  
 պաղ լուծումը մի ժողովրդի ազդային ինք-  
 նագիտակցության զարթոնքի հուժկու  
 պահանջն էր: Արտվյանը տեսնում էր, որ  
 այլևս ոչ մեկը հայերեն դիրք չի առնում  
 ձեռքը, հայերեն խոսողներն էլ չառ հաղ-  
 վադեսլ են: Արտվյանը նկատել էր, որ  
 վառվռուն պատանիները հորանջում, քնում  
 են հայերեն դրժերի վրա: Ի՞նչն էր դրա  
 պատճառը: Հայերեն դրժերը, մեծ մա-  
 սամբ, ժամադրքեր էին և, անսպասման,  
 դրաբարակեղու: Նվ, ընդհակառակը, այդ-  
 նույն աշակերտները համիչտակված կար-  
 դում էին ուսուցիչներն, դերմաներեն և ֆրան-  
 սերեն լեզվով ձեռքերն ընկած դրժերը:  
 Փոխանակ վառելու, բարբոքելու երեխայի  
 երևակայությունը՝ հայերեն դրժերն սպա-  
 նում, մեռցնում էին ամեն հետաքրքրու-  
 թյուն և աշխույժ: Ուրեմն, պատճառը  
 դրաբարն էր: Պետք էր նոր լեզու ստեղ-  
 ծել, այնպիսի լեզու, որ հասկանալի լինի  
 ժողովրդին և ոչ միայն անանձնաչորհյալ-  
 ներին:



«Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու համառը, թե սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին», — ասում է Աբովյանը «Վերքի» մեջ: Լուծել լեզվի հարցը, այսինքն քաղաքացիություն տալ ժողովրդական լեզվին, որը հասկանալի էր «հարիր հաղարին», հարազատ ու մոտ բոլորին, նշանակում էր կամուրջ դրականության և իրականության միջև, գիրը, գրավոր խոսքը հանել վանքի խցերից, տանել կյանք, մտցնել ժողովրդի մեջ, դարձնել այն նրա սեփականությունը: Վերջապես, այդ նշանակում է՝ ժողովրդին աղբային միողջության բերելու դադարի ասպարհովել:

Բայց դա հարցի միայն տեսական կողմն էր: Լուծումը պահանջում էր գործ: Առաջին խիզախը եղավ նա, ով այնքան կրքոտ ասպարեզ էր քաշել այրող հարցը: Այսինքն՝ ինքը—Աբովյանը: Բարիկենդանի տոներին, աշակերտներին արձակելով, Աբովյանը վերհիշում է այն բոլորը, ինչ տեսել, լսել ու ասել էր երեխա ժամանակ Բա-



նաքեռում: Արովյանի միտքը կանգ է առնում մի խոշոր պատմական անցքի վրա, որին ինքը ժամանակակից ու ականատես էր եղել պատանի հասակում: Ահա այդ նյութի վրա նա որոշում է կառուցել իր առաջին վեպը:

«Վերքի» նյութն այն հետաքրքրական պատմաչրջանն է, երբ Հայաստանը դառնադին հեծեծում էր պարսկական լծի տակ:

Վիպադրուղը բացում է ճնշված ժողովրդի վերքը, նրա ողբերգությունը: «Ժամանակը էնպես էր ծովել, որ մարդ իր դուռիսը չէր կարում պահի», — ասում է Արովյանի դյուղացին: Հայ դյուղացին դժգոհ էր: «Վերքը» նրա տրտունջի փիլիսոփայությունն է: Գյուղացին իր դատածի տերը չէ «Ո՛չ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ո՛չ ողորմչաղը»: Գյուղացուց խլել են ամեն ինչ: Խլել են վո՛չ միայն ինչքը, այլև պատիվը: Սարգարի չնչին պաշտոնյաների կրնկի

տալ տրորվում է հայի մարդկային կո-  
չումն ու արժանապատվությունը :

Վա՛յ է՛ն աղբին՝ որ աշխարքումս  
անտեր ա ,

Վա՛յ է՛ն երկրին՝ որ թշնամու  
դերի ա ,

Վա՛յ է՛ն խալխին՝ որ ինքն իր  
կյանքն , աշխարքը

Զի՛ պահպանիլ , ու հարամու  
ձեռ կը տա :

Բայց թշվառությունն էլ ալի ու սահման  
է ճանաչում : Վիշտ ու տառապանք , ամեն  
անարդանք տեսած ժողովուրդն էլ իր հե-  
րոսականն ունի : Համբերությունը հատած  
ժողովրդի տրտունջքն էլ կարող է ծնել  
հանդուգն , խիզախ մարդիկ , որ ախոյան  
կանգնած հեգ ժողովրդին , կուլեն , արյուն  
թափեն նրա համար : Դա ժողովրդի ազա-  
տատենչ ոգին է , որ այսօր Աղասու , վաղը  
Հովակիմի , մյուս օրը մի այլ անուն ու  
կերպարանք առած , ղենքը ձեռին բարձրաց-



նում է գլուխը: Աղատասիրությունն ամեն մի ժողովրդի անկապտելի իրավունքն է: Աղասին արյուն է թափում այդ իրավունքը ձեռք բերելու համար: Նա իր գլուխը դնում է մահու տակ:

Այն քաղաքական մտայնությունը, որի վրա հեղինակը կառուցել է իր վեպը, արտափայլում է Աբովյանի էպոխայի գլխավոր կիրքը, աղքատյին աղատադրության գաղափարը:

Ռուս զորքի հաղթությամբ Հայաստանը ոտք է դնում կյանքի մի նոր շրջան: Ռուսները վեպի մեջ հանդես են գալիս իբրև Հայաստանի փրկիչ:

Աբովյանի քաղաքական մտայնությունն այն ժամանակ, իհարկե, չէր թափանցում ուսում սկսականության աշխարհակալական ձգտումների մեջ: Նա իր առաջ հարց չէր դնում, թե ինչու է «Ռուսաստանը տիրում Կովկասի լեռներին»: Աբովյանի ուսմական օրինատացիան, սակայն, իր շատ որոշ սկսումական հեռատեսությունն ուներ:



Այո՛, նա պատմական խորաթափանցու-  
թյամբ էր նայում քաղաքական հարցերին։  
Նա շատ լավ գիտեր, որ մի լուսավորված  
ազգի, օրինակ, Ֆրանսացիների համար,  
Ռուսաստանի տիրապետության տակ անց-  
նելը այն նշանակութունը չէր ունենա,  
ինչ հայերի համար։

Հայաստանը քայքայված և ուժասպառ  
եղած երկիր էր։ Նրան պետք էր մի ու-  
ժեղ կռվան։ Ո՞րն էր լինելու այդ կռվա-  
նը— Պարսկաստա՞նը, թե Ռուսաստանը։  
Պարսկական տիրապետությունն իր սուխ-  
կան ահավոր հետամնացությամբ վտանգել  
էր Հայաստանի ոչ միայն ազգային ինքնու-  
թյունը, այլև Ֆիզիքական գոյությունը։  
Արովյանը մի տեղ ասում է, որ ամեն ինչ  
խորտակող, ուժեղ հեղաշրջումների հոր-  
ձանքի մեջ հայերի համար դժվար է պաշտ-  
պան կանգնել իրենց ազգային ինքնուրույ-  
նությանը, պահպանել լեզուն և ընդհան-  
րապես հոգևոր գանձերը։ Ռուսաստա-  
նի մեջ նա տեսնում էր այն հզոր պետու-  
թյունը, որի թևերի տակ հայ ժողովուր-



դը մի պահ կարող է ուշքի գալ, շունչ  
 քաշել, հավաքել իրեն: Ռուսաստանի  
 կողմն անցնել՝ նշանակում է փրկել ազգը  
 կորստից—ահա առաջին պայմանը: Իսկ  
 երկրորդը՝ ժողովրդի բախտը կապել մի  
 ժողովրդի հետ, որի լեզուն, գրականու-  
 թյունը, կուլտուրան արդեն սկսել էին  
 աշխարհի հիացմունքի առարկան դառնալ:  
 Այդ է պատճառը, որ Աբովյանը չառ մեծ  
 նշանակութիւն էր տալիս ռուսաց լեզվին:  
 Դա կօղնի,—ասում էր նա,—կրթելու մեր  
 միտքն ու զգացմունքը ռուս գրականու-  
 թյան ստեղծագործութիւններին վրա, վեր-  
 ջապես, մոտենալ այդ ժողովրդի ողուն:  
 Ռուսաց լեզուն սովորելով,—ասում է  
 նա մի ուրիշ տեղ,—մենք կարող ենք մի-  
 անալ ռուս մեծ ազգի հետ, որի միայն ա-  
 նունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ  
 օտարին, սեր և անձնվիրութիւն:

Ազգութիւն գաղափարը վեպի քաղաքա-  
 կան մտայնութիւն առանցքն է: Ժողո-  
 վուրդը պետք է դա, հասնի ազգային ինք-  
 նատանաչութիւն: Դրա համար պետք է



Եյնպէս անել, որ ժողովուրդը կարենա  
 ինքն իրեն ճանաչել... «մեր աղդը, որ  
 խեղճ ամնացել, թրի, կրակի եսիր, բոլորի  
 պատճառն են ա, որ մեզ ասող չի ըլում,  
 թե մենք ուլ ենք, մեր հավատն ինչ ա,  
 ինչի համար ենք եկել աշխարհ. քոռ դա-  
 լիս ենք, քոռ դնում»։ Այստեղ դժուրացու  
 բերանով խոսում է ինքն Արովյանը։ Դուրս  
 հանել ժողովրդին հողեկան և մտավոր  
 խավարից, որի մեջ ընկղմված նա խար-  
 խաւիում է։ Ժողովուրդը պետք է կանգնի  
 աղգային միողջության ճամբի վրա, դառ-  
 նա աղղ, համահավաք ժողովուրդ, ունե-  
 նա իր աղգային հողերանությունը։ Դրա  
 համար նա պետք է լավ խմանա իր պատ-  
 մությունը, լավ ու խոր ըմբռնի, հասկա-  
 նա այն դարերի ճամբան, որի վրայով  
 ինքը, այդ հինավուրց ժողովուրդը սահել,  
 անցել է իբր կոխկրտված, վիրավոր ու  
 դառնացած, ցիրուցան եղած ու անկադ-  
 մակերպ ժողովուրդ։ Իր «Վերք»-ով Արով-  
 յանը հայի ձեռն է տալիս նրա չափ մոտ  
 անցյալի պատմությունը։



Բայց «Վերք»-ի քաղաքական մտայնութ-  
 թյունն այս կետի վրա չի հանդչում: Արո-  
 վյանն այն մտքին է, որ այդ բոլորը վեր-  
 ջին հաշվով ծառայելու են մի դադափարի,  
 որը դարեր անընդհատ կազմել է ինչպես  
 ուրիշ ճնշված ժողովուրդների, այնպես էլ  
 հայ ժողովրդի երազանքը: Ո՞րն է այդ  
 ունենալ աղատ և քաղաքականապես ան-  
 կախ հայրենիք: Դրա համար չպետք է  
 ձեռքը ծոցը դրած կանգնել: Եթե հարկա-  
 վոր լինի՝ պետք է կռվի դուրս դալ, ար-  
 յուն թափել: Բայց այս դադափարը նա իր  
 վեպի մեջ բացահայտ ձևով չի դրել, այլ  
 ասել ու անցել է մի հեռավոր ակնարկի  
 ձևով, որ հասկացողը հասկանա:

Աղգային աղատադրական շարժումը մեր  
 իրականության մեջ մկրտվեց լուսավորա-  
 կան շարժման դադափարական ավազա-  
 նում: Արովյանի երկերում եղած ակ-  
 նարկները՝ «արյուն թափելով» անկախ,  
 աղատ հայրենիք ունենալու մասին, վկա-  
 յում են այն նոր շրջափուլը, որ 40-ական  
 թվականներից ոտք դրեց հայ աղգային ա-



կատարական չարժուժը: Ռուսական ցարիզմի օգնութեամբ կռիւ մղելով պարսից տերութեան դեմ, հայ ժողովուրդն այժմ պետք է ելնէր «ռուսական հզոր արծիւ» դեմ՝ պաշտպանելու իր ազգային իրաւունքը:

Անժամանակ մահը խանգարեց Աբովյանի քաղաքական մտայնութեան վճիտանալուն: Եւ չատ բան, որ Աբովյանի ժամանակ դեռ պարզ ու ըմբռնելի չէր, հասկանալի եղավ հետո, հայ վաթսուականների ժամանակ: Աբովյանն իր ծոցում, գրեթե դադառողի կրեց հայ ժողովրդի ազատութեան դրոշը, իսկ հաջորդ սերունդը Նալբանդյանի ձեռով թաղուն պահված դրոշը հրապարակ քաշեց:

Աբովյանը «Վերքը» գրել ու պատրաստել էր դեռ 1840-ին: Հեղինակն իր վեպը չտեսավ տպագրված: «Ո՞վ գիտի, բաւքի թե մի աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպիլ տա», — հույս է հայտնում նա մի տեղ: Այդպես էլ եղավ: Աբովյանի մահից հետո, 50-ական թվականներին արտագրված



«Վերք»-ը ձեռքից-ձեռք անցավ: «Վերքի» առաջին տարածողները եղան նրա աշակերտները, որոնց մոտ, դեռ 1838-ին մի քանի հատվածներ կարդացել էր:

«Վերքը» ձեռքից ձեռք անցնելով ընկավ Դորպատ: Արուսյանը մի տեսակ ճանապարհ էր բացել դեպի Դորպատ, որ 50-ական թվականների սկզբներին հայ գրողների ու գործիչների զաղափարական մկրտության ավազանն էր դարձել: Դոբինյանը, Պատկանյանը և շատ ուրիշներ ղիշերներ են լուսացրել «Վերքի» արտագրված օրինակի վրա, իրենց արցունքով թրջել ձեռագրի էջերը: Ներշնչված հայ դորպատականները հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ էին գրում:

Վերջապես, 1858-ին, Փոնդոյանի ջանքերով, Թիֆլիսում լույս տեսավ «Վերք Հայաստանին»: Վեպը մեծ հաջողություն ունեցավ: Պերճ Պոռչյանը պատմում է այն տպավորությունը, որ գործել է իր վրա Արուսյանի վեպը: Այնքան է կլանվել Պոռչյանը, որ մի անգամ կարդալուց հետո,



նույն դիշերը երկրորդ անգամ է սկսել:  
 «Վերքի» ազդեցության տակ նա սկսում  
 է դրել իր անդրանիկ վեպը՝ «Սոս և Վար-  
 դիթերը»: Միայն Պռոշյանին չի ոգևորել  
 «Վերքը»: Վեպը մեծ ազդեցություն է ու-  
 նեցել նաև Ղազարոս Մալայանի վրա:  
 Բարձր դնահատության է արժանացել «Վեր-  
 քը» հյուսիսամիայլականների՝ Ստ. Նազար-  
 յանի, Միք. Նալբանդյանի, արևմտահայ  
 հրապարակախոս Ստեփան Ռսկանի և ու-  
 րիշների կողմից: Ավելի ուշ, 90-ական և  
 900-ական թվականներին «Վերքի» մասին  
 շատ ջերմ ու դրական արտահայտվել են  
 Ստեփան Շահումյանը և Հովհաննես Թու-  
 մանյանը:

Ի՞նչն էր, որ այդպես հմայում էր վեպի  
 ընթերցողներին: Ամենից առաջ, իհարկե,  
 այն, որ դա մեր առաջին ազգային վեպն  
 էր: Լավ է ասել Նալբանդյանը, թե «այդ-  
 աշխատության մեջ մարմին է առել ազգի  
 հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հաս-  
 կացողությունը»: Հայկական գյուղը պար-  
 սիկ տերության տիրապետության տակ,



ռուս-պարսկական պատերազմը, ռուսաց  
դորքերի մուտքը Նրևան, — ահա այն պատ-  
մական դեպքերը, որ իրենց ճշմարիտ  
պատկերացումն են դառն վեպի մեջ:

Կառուցված լինելով ազգային ազատա-  
դրության դադարի արձակուրդի վեպը ռոման-  
տիկական ոգի ունի: Մարդուն բարձրաց-  
նող, միտքն ու հոգին աղնվացնող ռոման-  
տիզմն է այդ, որ համակում է ընթերցո-  
ղին: Բայց դա վեպի շունչն է, ոգին:  
Վեպի մեջ ռեալիստական պատկերացում-  
ների կարելի է հանդիպել, մինչև անգամ՝  
նատուրալիստական նկարագրերի: Սանտի-  
մենտալիզմ — նույնպես կարելի է դանել:  
Բայց այդ բոլոր անհարկը միավորվում  
է երկի հիմնական ոճի, ռոմանտիզմի, չի-  
լերյան աղնիով, բարձր ռոմանտիզմի շուր-  
ջը: Բայց այդ չի խանգարել, որ Աբովյա-  
նը հարադատ մնա իրականությանը, վե-  
րապատկերի մի ամբողջ աշխարհ՝ որին  
վիպագրի բանաստեղծական կոբովը հավի-  
տենական շունչ է տվել: Աբովյանի ռեա-  
լիզմն անխառն է, բայց առողջ է, թեև,

հիպերբոլիկ է, բայց կենդանի, ինչպես  
Ժողովրդի զրույցը, խոսքը։ Աբովյանը,  
օրինակ, այնպես է պատկերազրում ծխա-  
մած խրճիթը, որ ընթերցողին մի պահ  
թվում է, թե ինքը ծխի հոտ է առնում։  
Զմռան տեսարանը կարդալիս մարդ ակա-  
մա ցուրտ և սարսուռ է զգում։ Դեմքերը  
գծելիս էլ Աբովյանը շատ հաճախ ունալիս-  
տական հնարների է դիմում։ Տեր-Մարկոս-  
սը, գլիր Կոտանը, Մուսոն, տանուտե-  
րը,—այս բոլորը կենդանի մարդիկ են։

Մի փոքր այլ է Աղասին։

Դա հերոսական դեմք է և, բնականա-  
բար, նրա նկարագիրը ունալիստական չէ  
սովորական հասկացողությամբ։ Աղասին  
քաջ է, առասպելական ուժի տեր, բայց  
զարմանալի ազնիվ ու բարի։ Գեղեցիկ է,  
խելոք, ամեն բանի մեջ շնորհալի և ըն-  
դունակ, մարդասեր։ Մի խոսքով Աբո-  
վյանն իր հերոսին ներկայացրել է բոլոր  
բարեմասնություններով։ Աղասին դյուցազ-  
նական կերպար է։ Նա մի կողմով հանդի-  
սանում է Ժողովրդի ազնիվ ու լավ գծերի



խտացումը, մյուս կողմով՝ շիլլերյան հե-  
րոսների օրինակով՝ Աբովյանի դադափար-  
ների ձայնափողը: Այդ՝ Աղասու պատկերի  
կուռ ամբողջությունը երկրեղկել է Գեղջ-  
կական պարզամտությունը չի խանդարում,  
որ նա լյուտերականության դիրքերից քննի  
եկեղեցին, ծաղրի նրա ծիսակատարու-  
թյունները: Իր մենախոսությունների մեջ  
Աղասին պանթեիզմի հողի վրա մերժում  
է միջնադարյան ասկետիզմը, հանդերձյալ  
աշխարհին հակադրելով յերկրային կյանքի  
հրապույրը, վաշեւքը: Նույն մտքերն Աբո-  
վյանն արտահայտել է նաև «Թուրքի աղ-  
ջիկ» սրտառուչ պատմվածքի մեջ, այս  
անգամ արդեն իր անունից:

«Վերքը» հիմնադես կառուցված լինելով  
ուռա պարսկական պատերազմի Փոնի վրա,  
ունի շատ որոշ սյուժետային դիժ: Մի ու-  
րիշ հեղինակ հարազատ կմնար դրան,  
բայց Աբովյանը փշրում է վեպի այդ սահ-  
մանները և իր հախուռն ընթացքի մեջ է  
առնում ճամբին պատահածը: Վեպը հե-  
ղեղված է խոհական և լիրիքական զեղում-

ներով: Վեպի հիմնական շաղախը հուլի  
 է, հուլականությունը: Լինում են բազմա-  
 թիվ պահեր, երբ հեղինակի զգացմունքնե-  
 րի հեղեղի մեջ կորչում է սյուժեն, վիպա-  
 կան գործողությունը: Ինքն Աբովյանն էլ  
 է գիտակցում այդ: «Լավ չի սկսած բանը  
 թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ գի-  
 տեմ, ամա սիրտս չի դիմանում, ի՞նչ  
 անեմ», — խոստովանում է հեղինակը վե-  
 պի կեսին: Աբովյանն ասել է, ինչ որ մըտ-  
 քով անցել է, ինչ որ սիրտը զգացել է: Մի  
 գուցե դրանից երկի վիպական կառուց-  
 վածքը մի փոքր տուժել է, բայց դրա փո-  
 խարեն նա «Վերքի» մեջ դրել է իր ժամա-  
 նակի միտքն ու հոգին: «Վերքը» հայ ժո-  
 ղովուրդն է, որ Աբովյանի բերանով դա-  
 րերին ու սերունդներին խոսում է, պատ-  
 մում իր տրտունջքը, մտածումներն ու ի-  
 մաստությունը:





Մյուս մեծ և նշանավոր գործը, որ ստեղծել է Աբովյանը, դա «Նախաշավիղն» է: «Վերք Հայաստանին» դարագլուխ կազմեց հայ դրականության մեջ, իսկ «Նախաշավիղը» մի կատարյալ հեղաշրջում առաջ բերեց հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: Երկու գործերի դադարիարական շաղախը դեմոկրատիզմն է: Թե՛ մեկը, թե՛ մյուսն ախոյան կանդնեցին կղերական միջնադարյան մտայնության դեմ, առաջ քաշելով աշխարհիկ սկզբունքների պաշտպանությունը դրականության և մանկավարժության մեջ: «Նախաշավիղը» հիմն ի վեր շարժեց մանկավարժական դոգմատիկ միտքը: Բացի նրանից, որ «Նախաշավիղը» փոխարինելու էր սաղմոսին, կտակարանին, որոնք անգիր անելու համար հայ մանուկները զլուխ էին ջարդում, միաժամանակ դառնալիքային մանկավարժության դադարիարների պաշտպանությունն էր հայ իրականության մեջ:



«Նախաշավիղի» մեջ Աբովյանը հանդես է գալիս իբրև Ռուսսոյի աշակերտ: Նա պահանջում է ճանաչել մանկան հոգին, նրա միտքը չծանրաբեռնել ժամագրքի խրթին դրվածքներով, որոնք, ինչպես Աբովյանն է ասում, «միանգամայն օտար և անսովոր են դեռահաս մանուկներին սովորական լեզվին, հոգեկան կարողության և բնական հետաքրքրության»: Աբովյանը «Նախաշավիղով» պահանջում է մի անգամ ընդմիջտ հրաժարվել դրերի անունները տալու՝ այբ, բեն, դիմ դասավանդման միջնադարյան եղանակից: Դրա փոխարեն նա առաջ է քաշում հնչական մեթոդը, ա, բ, գ, այսինքն՝ տառերի բնական արտասանությունը: Նվ, որ գլխավորն է «Վերքից» հետո «Նախաշավիղը» գրաբարի սրտի մեջ խրված ամենամեծ սուրը եղավ: «Գրաբարի խրթնաբանությունը, — ասում է Աբովյանը, — պատճառ է, որ երեխաներին ուսումը սոսկալի պատիժ թվա, դպրոցը՝ տանջարան»: Գրաբարը «Նախաշավիղի» մեջ Աբովյանը փոխարինում է ոչ թե արարատ-



յան բարբառով, ինչպես «Վերքի» մեջ, այլ դրեթե մաքուր դրական լեզվով: «Վերքի» համեմատությամբ սա արդեն մի քայլ առաջ է:

Մի փոքր այլ եղալ այս երկու դրքերի՝ «Վերքի» և «Նախաշավիլի» ճակատագիրը: «Վերքը» դրվեց ու մնաց տպագրության կարոտ: Հեղինակի աչքը բախտ չունեցավ տեսնելու նրա հրատարակությունը: Այնինչ երկար փորձություններից հետո Արովյանին հաջողվեց «Նախաշավիլը» տպագրել: Բայց այն, ինչ եկավ այդ հրատարակության գլխին, թերևս ամենագաթանն է հեղինակի ապրած ձախորդությունների մեջ:

«Նախաշավիլը», ինչպես արդեն գիտենք, Արովյանը դրե՞լ էր մասնավոր դրպրոցի աշակերտների համար: 1839-ին «Նախաշավիլը» պետք է լույս տեսներ պետական ծախսով: Բայց հանկարծ, Արովյանի բախտից, Անդրկովկասի դպրոցների վերատեսուչ Հեսսեն Միլլերը, որ կարգադրել էր դիրքը տպագրել, պաշտոնանկ եղավ:



Այդ չէր կարող չանդրադառնալ գրքի բախտի վրա: Աբովյանը կորցրեց ոչ միայն իր լավագույն բարեկամներից մեկին, այլև «Նախաչավղի» հրատարակության իրավունքը, մի բան, որ նրա համար ստեղծել էր ցարական դահի նկատմամբ հանցավոր ճանաչված Հեսսեն Միլլերը: Նույն տարին Աբովյանը «Նախաչավղի» ուղարկում է Գիտությունների Ակադեմիա: Այստեղ ևս անհաջողության է հանդիպում գիրքը: Աբովյանը դիմում է, որ գոնե տպագրվի իր գործը, բայց ազգային լուսավորության նախարարությունը, դանդատվելով իր նյութական հնարավորությունների սղությունից, հրաժարվում է: 1841-ին Աբովյանը «Նախաչավղի» ներկայացնում է Անդրկովկասի դպրոցների վարչությանը՝ հայոց դպրոցներում այն իբրև լեզվի ուսուցման ձեռնարկ ընդունելու համար: «Նախաչավղի» բախտը դառնում էր Թիֆլիսի գիմնազիոնի մանկավարժական խորհրդի ձեռքին: Այս անգամ էլ անհաջողություն: Ձեռնարկը չի ճանաչվում բա-



վախար և օգտակար: Մի շարք դիտողու-  
թյունների հետ ձեռագիրը վերադարձնում  
են հեղինակին: Երկու տարի անց, թերու-  
թյունները շտկած, Աբովյանը կրկին «Նա-  
խաշավիղը» ներկայացնում է քննության:  
1843-ի վերջերին Թիֆլիսի գեմնադիրոնի  
մանկավարժական խորհուրդը նորից քննու-  
թյան է առնում «Նախաշավիղը»: Խոր-  
հուրդն այս անգամ ձեռնարկը գտնում է  
պիտանի և օգտակար, սակայն պահպանո-  
ղականությանը կառչած մարդիկ առաջար-  
կում էին փոխել գրքի ոգին: Երկրորդ  
քննությունից հետո՝ Աբովյանն այլևս չտա-  
նելով իր գլխին կարգված դատավորների  
քմահաճ վճիռները, պատահածը համարե-  
լով կյանքի մի դառն հեղնություն, փոր-  
ձում է իր ծախքով գլուխ բերել «Նախա-  
շավիղի» հրատարակությունը:

Գիրքն սկսում է տպագրվել, բայց լույս  
աշխարհ չեկած՝ ասիական վայրագ հե-  
տամնացության դոհ է դառնում: Վրաս-  
տանի թեմի առաջնորդ Կարապետ եպիս-  
կոպոսը, լսելով, որ «Նախաշավիղը» դըր-



ված է ռամկական, դուհիկ ժողովրդական  
լեզվով, որը, ինչպես Թիֆլիսի մանկա-  
վարժներն էին առում, քերականական որևէ  
որոշ կանոն չունի, կարդադրում է տալա-  
դրությունը դադարեցնել, հավաքել թեր-  
թերը և արդելել դրքի հրատարակությու-  
նը: Հոգևորականությունը, պահպանողա-  
կան մանկավարժությունը, չինովնիկական  
սլաշտոնեությունը, մի խոսքով այն ժամա-  
նակվա սլաշտոնական-քարացած միտքը  
արդելքի տակ դրին մի դիրք, որ շատ  
տարիներ հետո հեղինակի վառքերից մեկը  
կազմեց:



1843-ին Արտվյանը տեղափոխվեց Երևան:  
Դպրոցների վարչությունն այնքան էլ հաշտ  
աչքով չէր նայում նրան: Երևան տեղա-  
փոխվելն էլ շատ որոշ փորձ էր նրան հե-  
ռու պահելու այն մտավորական շրջաննե-  
րից, որոնց հետ նա շփվում էր Թիֆլի-  
սում: Այո՛, այլևս Արտվյանը վստահու-  
թյուն չէր ներշնչում: Բարձրագույն իշխա-



նությունն անկարող էր չնկատելու տալ,  
որ նա, եղած կարգ ու կանոնից դժգոհ,  
ինչպես կյանքում, այնպես էլ նամակնե-  
րում, դանդաղում է մինխտրության  
վրա: Մի նամակում Ֆրենլին նա կասկած  
է հայտնում, որ իր գրածները հայտնի են  
դարձել ամբողջ Թիֆլիսում: Թիֆլիսում  
չառ լավ հայտնի էր Աբովյանի բարեկա-  
մությունը Հեսսեն Միլլերի հետ: Վերջա-  
պես, փոխարքային ներկայացված բնու-  
թագրի մեջ Աբովյանի մասին ասված էր,  
որ նա «անկարող է իրեն հանձնված դպրո-  
ցը բարձրացնել մինչև այն աստիճան, որ  
նա օրինակելի լինի Անդրկովկասյան երկ-  
րում»: Մի խոսքով՝ Երևան տեղափոխվելն  
աքսորի նման մի բան էր: Բայց Աբովյա-  
նին մխիթարում էր այն միտքը, որ այժմ  
նա վայր է դնելու պանդուխտի ճամբոր-  
դական ցուպը և գործելու է իր հայրենի-  
քում:

Երևանը, հարկավ, այն չէր, ինչ Թիֆ-  
լիսը: Դա մի խեղճ, փոքրիկ քաղաք էր,  
դավառական սովորական ճահիճ: Աբով-



յանն ընկել էր մի գորշ և անգույն աչ-  
խարհ: Երևանի բարձր խավը, այսինքն՝  
չինոյնիկական սլաշտոնեությունը—դատա-  
վորները, ոստիկանական սլաշտոնյաները,  
մտավորականությունը— ուսուցիչները, բը-  
ժիշկները դո՛հ իրենց անձնական կյանքից,  
հեռու հասարակական բարձր շահագրգռու-  
թյուններից, իրենց համար մի տաքուկ  
միջավայր էին ստեղծել: Թղթախաղը սի-  
րելի դրաղմունք էր, հարբեցողությունը—  
սովորական երևույթ, իսկ բամբասանքն ու  
բանասարկությունը՝ միակ բաները, որ կեն-  
դանության էին կոչում մեռած աշխարհը:

Այս շրջապատի հետ Արուսյանը հաշտվել  
չէր կարող: Նա օտար, խորթ մարդ էր:  
Ծանոթանալով Երևանի դպրոցին՝ Արուս-  
յանի առաջին հոգսը եղավ ուսումնական  
հաստատությունն աղատել անպատրաստ,  
կրթական գործին միայն վնաս բերող ու-  
սուցիչներից: Եվ դա, Արուսյանի համար  
միանգամայն աննկատելի ձևով, դժտու-  
թյան անդրանիկ հասիկը եղավ, որ ընկավ  
ուսուցչական հին կաղմի և նոր կարգված



տեսչի միջև: Արտվյանը երազում էր իր ձեռքի տակ ունենալ այնպիսի ուսուցիչներ, որ դեթ մանկավարժական տարրական պատրաստություն ունենային, և, բացի այդ, սրտանց դուրժեին: Նա դպրոցական վարչության ուղղած իր ղեկուցադրերի մեջ աշխատում էր համոզել, որ անփորձ, անպատրաստ ուսուցիչն աշակերտին հարկադրում է ամեն բան սովորել անդիր, մեքենայորեն, որ նա չի ազդում աշակերտի մտքի վրա... Բայց ո՞վ էր Արտվյանին լսողը, ո՞վ էր նրա ասածներին ուշադրություն դարձնողը: Նրան չհաջողվեց ուսուցիչներին ոգևե մեկին փոխարինել մի ուրիշ և նոր մարդով: Բոլոր ուսուցիչներն էլ մնացին իրենց պաշտոնում: Եվ Արտվյանը, ուղեր-չուղեր, պետք է դլուխը կախ շարունակեր նրանց հետ աշխատել: Այդպես էր բարձրագույն իշխանության կամքը: Արտվյանը շատ լավ նկատում էր, որ այդ բոլորն իր պաշտոնակիցների մեջ առաջ է բերում «միայն դժգոհություններ և խռովություններ»: Նա այժմ պետք է լուռ

դիմադրեր այն ցած բանասարկություններին, որ դժգոհ ուսուցիչները կաղմակերպում էին իր դեմ:

Նա լեզու չգտավ նաև տեղական իշխանության հետ: Բլավատցիին, որ Երևանի նահանգապետն էր, մինչև վերջը դժտված մնաց նրա հետ: Սիրիբ քչվելու երկյուղը, աքսորական դառնալու սարսափելի հեռադատները հարկադրում էր նրան, ինչպես ինքն է ասում, յուրթյամբ չափավորել զգացմունքը: Բայց այդ նրան հեշտ չէր հաջողվում: Հոգով և մտքով աղնիվ, բնությամբ տաքարյուն և անմիջական Աբովյանը չատ հաճախ կորցնում էր զգուշությունը, չափավոր լինելու տակտը, երբեմն, նույնիսկ, հոգեկան հավասարակշռությունը:

Այո՛, միշտ չէր հաջողվում նրան անտարբեր ձևանալ, խուլ ու համր մնալ չըրջապատի նկատմամբ: Եվ նրա հոգին մի աղնիվ ցասումով ելնում էր, ընդվզում շուրջը եղած տգիտության դեմ: Քաղաքի գինեաներից նա զոռով դպրոց էր քարշ



տալիս աշակերտներին, փողոցում երևան-  
ցիներին բարձրաձայն հանդիմանում էր,  
որ իրենց երեխաներին դպրոց չեն ուղար-  
կում: Իսկ մի անգամ ստիպված եղավ  
նույնիսկ վախժաբարձացնել աշակերտնե-  
րից մեկի տղետ ծնողի վրա, որը խոնարհ  
բարե էր տվել փողոցով անցնող ոստիկա-  
նին և միանգամայն անտարբեր մնացել իր  
նկատմամբ: Դա մի նյարդային, ջղաճղա-  
կան քայլ էր, որով Արտվյանի աղնիվ ու  
անոթիջական հոգին մատնում էր իր անհաշ-  
տությունը, դժտությունն այդ տղետ,  
սահմանափակ շրջապատի հետ, որի մեջ  
ի աննշան, չնչին աստիճանավոր, բայց  
վոստիկան շատ ավելի էր պատկառանք  
աղդում, քան, ասենք, մի Արտվյան, որ ու-  
սուցիչ էր, մատաղ տերնդի դաստիարակ:  
Արտվյանը փորձեց մխիթարություն գրա-  
նել դպրոցական գործի մեջ: Մանուկների  
աշխարհը նրա տարերքն էր: Նա իր ողջ  
եռանդը գործ դրեց իր խնամքին հանձն-  
ված ուսումնարանն օրինակելի դարձնելու  
համար: Եվրոպական մանկավարժության



առաջավոր սկզբունքների վրա դաստիարակված Աբովյանի միտքը ճախրում էր բարձունքներում, դժուար էր թափանցել աշնալիսի բարենորոգչական ծրագրեր, որոնց նախանձել կարող էին հայ մանկավարժները նաև հետո, նույնիսկ մի քանի տասնամյակ անց։ Այն ժամանակ, երբ շարունակում էր իշխել միջնադարյան տիպի դժգոհությունը, որն իր կրթական սխալաստիկ եղանակներով, կրոնական դոգմաներով սպանում էր մանկան մեջ ինքնուրույնությունը, սերը դեպի գիրքը, կյանքի և բնության ճանաչողությունը, Աբովյանն առաջինը եղավ, որ առաջ քաշեց Հայաստանի դպրոցները հիմն ի վեր փոխելու հանդուգն ծրագիրը։ Մի խոսքով՝ նրա դպրոցական դործունեությունը Նրևանում և այդ դործունեության հետ կապված ծրագրերը, մտորումները հայ մանկավարժության պատմության լուսավոր էջերից են։ Աբովյանի մասին՝ իբրև մանկավարժի, ինչպես և կրթական դործի շուրջը նրա համոզումների ու ծրագրերի մասին հետաքրքիր վե-



կայություններ են թողել եվրոպացի դիտ-  
 նական-ճանապարհորդները: Գիտնական Կու-  
 խը, որ Երևանում այցելել էր Արով-  
 յանի դպրոցը, հետևյալն է գրում. . . «Հը-  
 նարավոր է, որ այս կամ այն հարցում նա  
 չեղվում է ժողովրդական կրթության բը-  
 նադավառում պետության նախադած  
 ուղուց, քանի որ արտաքին ձևականու-  
 թյունները չեն գոհացնում նրա՝ դեպի վեր  
 սավառնող հողին, հնարավոր է նաև, որ  
 նա ևս գործել է զանազան սայթաքումներ,  
 բայց, անկասկած, մինչև հիմա Անդրկով-  
 կասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը  
 նման սիրով ու այնպիսի զոհաբերությամբ  
 նվիրված լինի մանուկների դաստիարա-  
 կության գործին, ինչպես որ Արովյանն  
 է . . . Սակայն, դժբախտաբար, Արովյանին  
 չեն թույլ տալիս արժանի վերաբերմունք:  
 Զինովիկների նեղսրտությունը հաճախ ու-  
 չատ է խանդարում նրան առաջ տանելու իր  
 ազնիվ ու բուռն ձգտումները . . . Եթե Ա-  
 րովյանը որպես Երևանի դավառային  
 դպրոցի տեսուչ մնալ կարողանա իր գոր-

ծունեության ներկա շրջանի մեջ, և թե նրան դործոն աջակցություն ցույց տան իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով դնահատեն նրան, սպասելի է, որ Նրեանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով ոտնահարված հայ ժողովրդի համար»:

Այժմ աեսնենք, թե ի՞նչ էր առաջարկում Աբովյանը կթական դործը վերակառուցելու համար.

ա) աշակերտի ձեռք տալ դասագրքեր. պարզ ժողովրդական աշխարհաբար լեզվով և այնպիսի նյութերով, որոնք կարող լինեն մանկան մեջ արթնացնել բարի և ասլնիվ զգացումներ, բարձր հայրենասիրական մտքեր.

բ) դասատվությունը մեքենայական չրպետք է լինի, այլ դիտակցական: Աշակերտը պետք է ո՛չ թե սերտի, այլ հասկանալ, ըմբռնի.

գ) մեծ տեղ տալ բնագիտական դործիչներին, զլորուսին, քարտեզներին, նկա-



րին, որպեսզի մանուկն ուսածը զննի, զիտի, շոշափի.

դ) ուսումնական կյանքի անբաժան մասը պետք է կազմեն աչակերտական դրասանքները, լողը, խաղերը.

ե) դպրոցում ունենալ մի առանձին ուսուցիչ երկրագործություն և պարտիզպանություն դործնականապես անցնելու համար.

զ) տեղական լեզուների (հայերեն, ադըրբեյաներեն) դործնական նշանակութունից ելնելով՝ նրանց հատկացնել այնքան ժամեր, որքան ուսուցիչ լեզվի համար.

է) ուստիկանության միջոցով սլարտականություն դնել հայրերի մի քանի խրենց երեխաներին դպրոց տալու 7-8 տարեկան հասակից և չհանել նրանց դպրոցից ոչ մի պատճառով, մինչև 14 տարեկան հասակը և, ի հարկե,

ր) ամեն տարի դպրոցի աչակերտներից մի քանիսին ուղարկել առևտրական, տեխնիկական կամ գյուղատնտեսական դպրոցները, որպեսզի դրանով ապահովվի աչա-

կերտներն ապագան և, դրանով իսկ, ժամանակին ամրապնդվի երկրի արդյունաբերությունը. իսկ լավագույն աշակերտներին, անխտիր բոլոր դասակարգերից, ուղարկել բարձրագույն դպրոցներ:

Թվարկած կետերը, իհարկե, չեն սպառում Արտվյանի մանկավարժական բարենորոգչական ծրագիրը: Նա իր մանկավարժական հայացքները լրությամբ արծարծել է «Պատմություն Տիգրանի» անավարտ վեպի մեջ, որը Ռուսսոյի «Էմիլի» երկորյակին է: Ինչպես այդ երկի, այնպես էլ ընդհանրապես նրա մանկավարժական հայացքների վրա իշխում են Ռուսսոյի և Պեստալուցիի համոզումները:



Արտվյանն իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց կատարելապես գծոված իր շրջապատի հետ: Մի անսլատմելի խռովություն համակել էր նրա քնքույշ հոգին: 1845-ին, Ներսես Աշտարակեցուն ուղղված հուշակալոր թղթի մեջ Արտվյանը դանդառ-



վում է, որ իր օրերն ապարդյուն են անցնում, կարողությունն օրեց-օր սպառվում է, միտքը դլանում, տենչանքները հանդուգում: Արուսյանը չի թաղցնում, որ ամուսնական կյանք մտնելով՝ շատ վաղուց հրաժարվել էր նրանից, որ ինքը մի խորթ, օտար մարդ է սեփական ընտանիքում:

Իսկ ի՞նչ ողբերգություն էր ապրում Արուսյանը: Ի՞նչ անբուժելի վերք ուներ նրա սիրտը: Դա հայրենիքի վիշտն էր, Հայաստանի վերքը, որն ամոքելու համար պատրաստ էր, ինչպես ինքն է ասում, նույնիսկ խաչ բարձրանալու:

Արուսյանի հոգին շուտ մաշվում էր փոթորկումների մեջ: Այլևս ուռն պետականությունը չէր ներշնչում այն հույան ու հավատը, որ ուներ նա տարիներ առաջ, երբ դրիչը ձեռին, գլուխը թաղած թղթերի մեջ՝ հափշտակված գրում էր իր «Վերք Հայաստանին»: Այլևս Արուսյանը չէր տեսնում հայերի համար քաղաքական աղառն ու անկախ կյանքի իրական ուղի: Ավելին, նա պետք է նկատեր, որ ռուսական դահլ



նոր շղթաներ դրեց հայ ժողովրդի ոտքե-  
 րին: Եվ այս անգամ Արուսյանի խոյանքի  
 սովոր հոգին ընկղմվեց խոր հուսախաբու-  
 թյան մեջ, մի մեծ վիհ բանալով իր և  
 իրականության միջև: Կյանքի ամեն մի  
 քայլն այժմ նրա առաջ խոր հիասթափու-  
 թյան մի նոր դուռ էր բացում: Արուսյանը  
 եվրոպացի դիտնականների ու ճանապար-  
 հորդների հետ (Բոդենշտետ, Վադներ,  
 Հակոտհատուղեն, Արիխ և ուրիշներ) շրջել  
 էր Երկիրը, վկա դարձել ժողովրդի աղքա-  
 տության, նրանց մտավոր անասելի խեղ-  
 ճության, ընդհանուր տգիտության, ոուս  
 պաշտոնյաների չարաչափումների: Նա չէր  
 կարող չնկատել, որ ոուս կառավարու-  
 թյունը, ինչպես Բոդենշտետն էր ասում,  
 «հետամուտ է միայն մի նպատակի՝ կա-  
 մադուրկ ստրուկներ դարձնել իր հպատակ-  
 ներին»: Նա մի՞թե չէր տեսնում, որ Ե-  
 րևանի նահանգապետը կաշառակեր, պաշ-  
 տոններ առնող ու ծախող մի մարդ է, որի  
 անունն անգամ բավական էր ժողովրդին  
 բարոափի մեջ դրելու համար: Նա չէ՞ր



տեսնում, որ բարձրագույն իշխանությունը  
 թշնամաբար է տրամադրված դեպի իր  
 անձնավորությունը: Մի՞թե նա այնքան  
 պարզամիտ էր, որ չհասկանար, թե ինչու  
 իրեն Երևան տեղափոխեցին, թե ինչու իր  
 ձեռնարկումները (առևտրական տեսակետից  
 կարևոր սերմեր ստանալ, ղանադան դյու-  
 ղատնտեսական մեքենաներ դնել, Գերմանի-  
 այից բնադիտական գործիքներ ստանալ,  
 ուսուցչական կադմը թարմացնել և այլն)  
 արդեւի՞րում, խափանվում էին: Չէ՞ որ  
 հենց ինքը, Աբովյանը, իր մի գրության  
 մեջ բաց է անում Բլավատցկու թշնամու-  
 թյան բոլոր խաղաթղթերը: Չե՞ որ Թիֆ-  
 լիս, ղպրոցական վարչությանն ուղղած  
 մի ղեկուցադրի մեջ, նա ղառնացած ասում  
 է, որ կառավարությունն իր անդործնա-  
 կան հրահանգներով խանդարում է ղպրո-  
 ցական գործի ղարգացմանը, իսկ տեղական  
 իշխանությունները չեն նպաստում ղպրո-  
 ցական գործին: Մի՞թե Աբովյանը կարող  
 էր մոռանալ, որ Ներսես կաթողիկոսի  
 պատճառով, իրեն երեքօրյա կալանքի

տակ առան, կամ նա կարող էր չհիշել,  
որ կաթողիկոսը հետ կանգնեց իր աշա-  
կերտներին Գերմանիա ուսման ուղարկե-  
լու խոստումից :

Այո՛, խիստ հուսահատական էր նրա վի-  
ճակը : Հայրենակիցները նրան չէին հաս-  
կանում : Էջմիածինը ևրես էր դարձրել :  
Պաշտոնակիցները դավեր էին սարքում նրա  
դեմ : Իշխանության աչքում Աբովյանը մի  
մութ և կասկածելի դորպատական էր :

Աբովյանն ուղղում էր հեռանալ Շրեանից,  
դնալ մի ուրիշ տեղ, Ռուսաստան, Գեր-  
մանիա, որ հանդիստ առնի հետապնդում-  
ներից : Բայց խիղճը թույլ չէր տալիս : Նա  
ուսում, կրթություն էր ստացել, երգվել՝  
սուրբ ու մեռնել հայրենիքի համար : Թող-  
նել, հեռանալ՝ նշանակում էր լքել ժողո-  
վրդին : Թողնել, հեռանալ՝ նշանակում  
էր փախուստի դիմել, ղենքերը ցած դնել,  
կուրծքը դեմ տալ թշնամու սրին : Աբովյանի  
մտքից երբեք չէին հեռանում իր սիրելի  
ընկերոջ՝ Ստ. Նաղարյանի հորդորները—  
մնալ և դիմադրել : Կղան,—ասում էր



նա, — կղան երախտադետ հետնորդները և զարմացած հայացքով կնայեն իր վրա, որպես հայրենիքի մաքուր սիրո գովելի օրինակի:

Բայց որքան էլ համառ լիներ Աբովյանը, որքան էլ արիության ունենար նրա հոգին, միևնույն է, նա զգում էր, որ ինքը միայնակ է և անօդ: Նա ապրում էր միայնակ մարդու խոր և սարսափելի ողբերգությանը:

Աբովյանի եռանդն ու նվիրվածությունը շատերի համար կասկածի աղբյուր էր: Եվ այդ չէր խուսափել նրա աչքից: Իր մի նամակում նա խոստովանում է, որ Սիրի-րի ահը շարունակ աչքի առաջ է: «Կարծում էի ամեն սհաթ, թե Սիրիըն է լուվերջը», — գրում է Աբովյանը 1847-ին:

Կասկածների մեջ ընկած Աբովյանը կորցնում է իր հոգու հանդիսար: Նա դառնում է մտածկոտ, նյարդային, տառապում է անքնությունից: Նա նույնիսկ մի պահ որոշում է թողնել աշխարհիկ կյանքը, նորից վերադառնալ էջմիածին, վանքի կա-

մարներէ տակ աղոթք մըմնջալ: Տանջող  
հակասություններէ մեջ ընկած, նա փախ-  
չում է մարդկանցից, մենակության մեջ  
հանդիստ փնտռում, ընկերացած իր մըտ-  
քերի ու հուշերի հեղեղին, որին, ինչպես  
ինքն է մի նամակում ասում, կարող է մի-  
այն դադաղը խեղդել: Նա հուսահատ ող-  
բում է իր փայփայած հույսերի կործա-  
նումը:



1847-ին Արուսյանը Երևանը թողնելու  
հաստատ որոշում ընդունեց: Մտադիր էր  
տեղափոխվել Թիֆլիս կամ Մոսկվա:

Արուսյանը 1848-ի սկզբներին Թիֆլիս է  
մեկնում տեղնվելու Ներսես կաթողիկոսի  
հետ և առնելու նրա համաձայնությունը  
Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու  
մասին: Ներսեսը խոսք է տալիս: Արուս-  
յանը վերադառնում է Երևան: Փետրվարին  
մի նամակով կաթողիկոսը շտապեցնում է  
Արուսյանին: Արուսյանն սպասում էր, որ  
ինքն ազատ արձակվի և իր տեղը մի ու-



րիշը Երևանի ուսումնարանի տեսուչ կարգ-  
վի: Մարտի 11-ին Արուստանը դրուժյուն է  
ստանում, որ ինքն ազատված է և տեղը  
նշանակված է Տուրկեստանովը:

Մարտի 30-ին նոր տեսուչն սկսում է  
ընդունել ուսումնարանի դորժերը: Ինչպես  
մյուս օրերը, այնպես էլ ապրիլի երկու-  
սին Տուրկեստանովը դալիս է դպրոց՝ չա-  
րունակելու դորժերի ընդունումը, բայց  
Արուստանը չկա: Սպասում է սակայն զուր:  
Հետաքրքրվում է և իմանում, որ լուսա-  
դեմին դուրս է գնացել և այլևս տուն չի  
դարձել: Նոր տեսուչը հաջորդ օրն արդեն  
անհանդատացած, Արուստանի անհայտաց-  
ման մասին հայտնում է Երևանի գաղա-  
ռապետին: Մի պահ բոլորը ենթադրում  
են, որ Արուստանի անհայտանալու պատ-  
ճառը կարող է ծառայության հետ կապ-  
ված որևէ հանգամանք, օրինակ, դպրո-  
ցական դոմարի վատնում եղած լինել: Մի  
դուցե և իրավունք ունեին այդպես կար-  
ծելու, որովհետև ապրիլի երկուսին, այ-  
սինքն, անհայտացման օրը, Արուստանը

պետք է Տուրկեստանովին հանձներ ուս-  
սումնարանի դրամական հաշիվները: Չըս-  
տասելով Աբովյանի վերադարձին, ասորի-  
լի Գ-ին հատուկ հանձնաժողովը բացում  
է դրամարկղը և քննում հաշիվները: Ըս-  
տուգումը պարզում է, որ հաշիվները ճիշտ  
են, ենթադրությունը՝ սխալ:

Սկսվում են որոնումները: Ամեն մի ան-  
նշան հետք որոնողներին հույս է ներշնչում  
դռներու անլուր կորածին: Էմիլիան և ու-  
րիշ շատերը երկար ժամանակ կարծում է-  
ին, որ Աբովյանը կարող է վերադառնալ:  
Էմիլիան, ամեն անգամ ոտնուձայն էլս-  
դուան բաղխոց լսելիս, տեղից վեր էր թըռ-  
չում, դառնում աղջկան—«տե՛ս հայրդ-  
չի՞»: Մի աղտոտ հույս բոլոր տանեցիներին  
հավատ էր ներշնչում, որ այս է՝ դռները  
բացվելու են և նրանց մեջ երևալու է Ա-  
բովյանը:

Օրերն անցնում էին, իսկ Աբովյանը չը-  
կար:

Ժողովուրդը զանազան առասպելներ է  
հյուսում նրա անհայտացման շուրջը: Զա-



նաղան և մեկը մյուսից տարրեր ենթադրությունների տեղիք է տալիս պատահած դեպքը: Ոմանք ասում են, որ իշխանությունը «սև կարեւոր» տարել է Սիրի: Ուրիշներն էլ ասում են, որ մի երեւանցի թուրք, կասկածելով, որ Աբովյանը սիրային կապերի մեջ է իր կնոջ հետ, դադարաբար սպանել է և թաղել իր բաղում: Մի քանիսն էլ այն կարծիքին էին, թե սպանողը, հետքը կորցնելու համար, դիակը դետն է նետել: Սկզբում միայն Բողենյտեւը, հետո, արդեն տարիներ անց, նաև Ստ. Նաղարյանն այն ենթադրությունն արին, որ «Աբովյանը մի խավար բոսկի մեջ մահու է տվել յուր անձը», այսինքն՝ անձնասպան է եղել:

Սրանք բոլորն էլ ենթադրություններ են: Մինչև հիմա էլ Աբովյանի անհայտացումը մնում է մի չլուծված առեղծված: Թերևս այդպես էլ մնա, մինչև որ մի աննախկալ վկայություն չգա ցրելու դադունքը, խորհրդավորությունն ու մութը: Բայց ինչպես էլ լուծվի հարցը, թվարկած-

ներկց որ մեկն էլ հաստատովն և ճշովն  
միևնույն է, այժմյանից մի բան պարզ է :  
Այդ այն է, որ Աբովյանն իր ժամանակի  
դոճը եղաւ : Սանդի հողի վրա է սպանւել,  
թե ինքն է ձեռք բարձրացրել իր վրա,  
Սիրիւր են քշել նրան, թե ինքն է վախել  
ու կորստի մատնել իրեն՝ միևնույն է,  
պարզ է, որ բոլոր դեպքերում էլ ժամա-  
նակը, խաւար ժամանակն սպանեց նրան :

Նա չկարողացաւ դուրս պրծնել «մշու-  
չից, կամայականության, լուելյայն անդդա-  
յացման, անհետ կորստի, տառապնալից  
տանջանքների թաղաւորությունից» :

Այո՛, նա ընկաւ անհաւասար կռիւ մեջ,  
իր ժողովրդի ապագայի համար մղած  
հանդուգն պատերազմի պահին՝ իբրեւ դա-  
ժան ժամանակների նահատակ :

---



Ամփոփենք:

Արուլյանի կյանքի տխուր տարեգրությունը հայ ժողովրդի դարավոր տառապանքի խտացումն է մի հանճարեղ անհատի մեջ, որն ընկավ՝ խավար ժամանակների նեղ դաշույնը իր «աղնիվ ու մեծ սրտի մեջ»:

Հիրավի, որքան ընդհանուր ու նման բան կա հայ ժողովրդի և նրա զավակի ճակատագրերի մեջ:

Հայ ժողովուրդը մի խորին խորհուրդ հոգում, վերքատ սրտի թառանչը շուրթերին, անվախճան մաքառում է ապրել՝ վրկայելու սերունդների ու ժամանակների—

լուսավոր մարդկության առաջ, որ ինքն էլ մյուս ժողովուրդներն պէս խոսք ունի ա- սելու աշխարհին, որ «հայի հանճարն էլ, ինչպէս բանաստեղծն է ասում, միշտ սա- վառնել է վսեմ, էն սուրբ ու նուրբ ո- լորտներում, թեեւ ինքը՝ հայը միշտ լողա- ցել է արյան ծովի մեջ»:

Արտվյանի կյանքն էլ մի մաքառում է- ղավ, մաքառում խավարի ու տգիտության դեմ: Նա պատուեց իր կուրծքը ու, սիրտը ջահ դարձրած, ժողովրդին առաջնորդեց դեպի ազատն ու գեղեցիկը, լուսավորն ու բարձրը: Ինքը վիրավոր և ուժասպառ, դժվար ճամբի կեսին ընկավ արյունա- քամ, բայց նրա մխացող սիրտը երկար լու- սավորեց նրանց ուղին, ովքեր գնացին նվաճելու փառքն այն ծով գանձերի, ինչ որ դարերով երկնել էր հայ ժողովրդի միտքն ու հոգին:

Մի քանի տարուց կմտտենա մեծ լու- սավորչի անհայտացման հարյուրամյակը և մենք չգիտենք, թե վորտեղ են հանգ- չում նրա ոսկորները: Մենք նույնիսկ չգի-




տենք, թե՛ ո՞րտեղ և ի՞նչպէս Արուսեանն  
աւանդեց իր վերջին շունչը, ունեցա՞ւ  
արդյոք իր հողաթումբն աշխարհում: Բայց  
նա այն հազվագյուտ ողիններից է, որոնք  
փարատելով դարերի մշուշը՝ համերժու-  
թյանն են ձգտում:

Միայն հիմա, մեր օրերում է, որ պարզ-  
վում է Արուսեանի ճշմարիտ մեծությունը:  
Իբրեւ անցյալ կուլտուրայի միակ և օրի-  
նական ժառանգ, ժողովուրդը Մարքս-Լե-  
նինյան լույսի տակ ոչ միայն վեր է հա-  
նում Արուսեանի անդնահատելի դերը Հա-  
յաստանի պատմութեան համար, նրա նշա-  
նակությունը արդիականութեան համար,  
այլև նրա «հարիր հաղարի» համար դրած եր-  
կերն այսօր դարձնում է միլիոնների սե-  
փականություն: Ռուս մեծ ժողովրդի օգ-  
նությամբ աղատադրված հայ ժողովուրդը,  
սոցիալիզմի կառուցման այս վառ օրերին,  
նոր կյանքի է ռդեկոչում նրան, որ այն  
անիրավ ու խավար դարում փորձեց իր  
սեփական արյունով սրբել ժողովրդի աչ-  
քից տառապանքի դարավոր արցունքը:

Այո, մի նոր կյանքի ենք կոչում նրան,  
որ մի վառ հիշատակ է թողել ժողովրդի  
սրտում:

---







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042444

I

A 6414